

Վարդան Զ. Պետրոսյան
 Բանաս. գիտ. թեկնածու

ՀՊԱԿԱՆ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Վարկածային վերականգնման փորձ*

Բանալի բառեր – ընդհանուր հնդեվրոպական լեզու, հպականների երկկարգ համակարգ, կարգ և շարք, հնչույթ և ենթահնչույթ, Ե. Կուրիլովիչ, Մ. Մայրիոֆեր, Պ. Հոպեր, Ֆ. Կորսլանդ, Գամկրելիձե-Իվանովի հայեցակարգ, «կոկորդայինների տեսություն», «կատկայինների տեսություն»:

Մուտք

Ինչպես առհասարակ հնդեվրոպական հպականների, այնպես էլ, մասնավորապես, ձայնեղ հպականների կարգի/(կարգերի) գոյության և հնչաբանական բնութագրի հարցերը համեմատաբանների քննության նյութ են դարձել դեռևս 19-րդ դարի վերջին, երբ պատմահամեմատական լեզվաբանության մեջ տիրապետող էին հպական բաղաձայնների երիտքերականական պատկերացումները՝ **ձայնեղ-շնչեղ ձայնեղ- խուլ -շնչեղ խուլ** քառանդամ բաշխումով (հմմտ. *d-*dʰ-*t-*tʰ): Այդ համակարգը վերանայելու առաջին փորձն անում է Ֆ. դը Սոսյուրը «Նպաստ [սանսկրիտի] շնչեղ խուլների պատմության մեջ» գեկուցումով: Սանսկրիտում th-ով որոշ օրինակներ մեկնաբանելով իբրև h.-ե. «t+կոկորդային» հաջորդականության հետագա զարգացում (հմմտ. սնսկ. pṛthu- «պատրաստ» < *pṛtH-u-, սնսկ. tiṣṭhāmi «կանգնում եմ» < *(s)ti-stH-e/o-)՝ նա մերժում է շնչեղ խուլերի (tenuis aspirata) շարքի առկայությունն ընդհանուրհնդեվրոպականում¹: Սոսյուրի այդ բացահայտումը, ըստ էության, դառնում է նաև «շնչեղ ձայնեղ հպականների խնդրահարույց լինելը ենթադրելու հիմնական պատճառը»²: Նշված գեկուցումը, որն առաջին անգամ լույս է տեսնում **Ֆրանսիական լեզվաբա-**

ԺԱ (ԺԷ) փարի, թիվ 2 (66), ամբիլ-հունիս, 2019
 ՎԿԱ համահայկական հանդես

*Հոդվածն ընդունվել է տպագրության 15.02.2019:
 1 Տե՛ս **Saussure F. de**, Contribution à l'histoire des aspirées sourdes [sanskrit], Recueil des publications scientifiques, Genève, 1922, էջ 603: Հմմտ. նաև՝ **Тронский И. М.**, Общиневропейское состояние (вопросы реконструкции), «Наука», Л., 1967, էջ 11-12, **Майрхофер М.**, Индоевропейская грамматика. т. 2. Фонетика, «Новое в зарубежной лингвистике» (шунтинскл` НЗЛ), вып. XXI, «Прогресс», М., 1988, էջ 122:
 2 **Семереньи О.**, Введение в сравнительное языкознание, М., 1980, с. 160.

նական ընկերության «Տեղեկագրում» (1891), փոքրածավալ լինելու պատճառով «հատուկ ուշադրություն չի գրավում իր վրա»³: Ավելի ուշ հոգուտ հպականների եռանդամ համակարգի են արտահայտվում Ա. Մեյեն, Հ. Պեդերսընը, Ե. Կուրիլովիչը և ուրիշներ: Սակայն, հ.–ե. լեզուների մեծ մասի համար ընդունելի համարելով հպականների եռանդամ համակարգով նախածնների վերականգնումը՝ Ա. Մեյեն «... առնվազն հնդ–իրանական լեզուներով, հայերենով և հունարենով ներկայացված շրջանի համար» առավել հավանական է համարել նաև չորրորդ՝ շնչեղ խուլերի կարգի (հմմտ. *p^h, *t^h, *k^h) վերականգնումը⁴:

1. Հիմնական հարցադրումները

Վերոհիշյալ հարցերի շուրջ բանավեճերը սկզբունքային բնույթ են ստանում հատկապես 20–րդ դարի կեսին, երբ պատմահամեմատական ուսումնասիրությունների ոլորտ են ներգրավվում նաև տիպաբանական հետազոտությունների տվյալները, և կիրառվում են կառուցվածքային մեթոդներ: Այս փուլում հպականների երիտքերականական համակարգից հրաժարվելու փորձը կապվում է դանիացի նշանավոր լեզվաբան Հ. Պեդերսընի անվան հետ: Հ. Պեդերսընի գիտական հայացքներն ընդհանուր առմամբ ձևավորվել էին երիտքերականական պատկերացումների տիրապետության տարիներին, բայց նա այն գիտնականներից էր, որոնց տեսակետները բարեշրջական փոփոխություն էին կրում նոր հայտնագործությունների լույսի ներքո: Կյանքի վերջին շրջանում՝ 1951–ին հրապարակված «Ընդհանուրհնդեվրոպական և նախահնդեվրոպական հպական հնչյունները» աշխատության մեջ Հ. Պեդերսընը, նկատի ունենալով վերջին տասնամյակների ընթացքում լեզուների պատմահամեմատական ուսումնասիրության ոլորտում արված նոր բացահայտումները, առաջարկում է «ընդհանուրհնդեվրոպականում» վերականգնել հպականների եռանդամ համակարգը, որը երիտքերականների քառանդամ համակարգից տարբերվում էր շնչեղ խուլերի կարգի բացակայությամբ, իսկ այլ եռանդամ համակարգերից նրանով, որ պարզ ձայնեղների կարգում չէր վերականգնվում շրթնային բաղադրիչը՝ *b–ն (հմմտ. (*–) / *b^h / *p)⁵: Նախահնդեվրոպականի համար Հ. Պեդերսընը վերականգնել է **պարզ խուլ–շնչեղ 1 խուլ–պարզ ձայնեղ** կարգերը՝ պարզ խուլերի կարգում շրթնային բաղադրիչի՝ *p–ի բացակայությամբ (հմմտ. (*–) / *p^h / *b): Հետևաբար, հպականների նախահնդեվրոպական համակարգից անցումն

3 **Майрхофер М.**, նշվ. աշխ., էջ 122:

4 **Stu Мейе А.**, Введение в сравнительное изучение индоевропейских языков, М.–Л., 1938, էջ 116:

5 **Stu Гамкрелидзе Т. В., Иванов Вяч. Вс.**, Индоевропейский язык и индоевропейцы, Тбилиси, 1984, т. 1, էջ 6–8, **Майрхофер М.**, նշվ. աշխ., էջ 124, **Кортланд Ф.**, Праиндоевропейские глоттализованные смычные, «Вопросы языкознания» (այսուհետև՝ ВЯ), 1985, N 4, էջ 43 (հմմտ. **Pedersen H.**, Die gemeinindoeuropäischen und die vorindoeuropäischen Verschlusslaute, Kopenhagen, 1951, 16): Պատմահամեմատական հնդեվրոպաբանության մեջ այս գաղափարի հեղինակային իրավունքը վերագրվում է Հ. Պեդերսընին, սակայն պիտի նկատել, որ նրանից շատ ավելի վաղ այդ մտտեցումը դրսևորվել էր Հ. Հյուբշմանի «Հայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների շրջանակներում» (1875) մեծարժեք հոդվածում, իհարկե՝ առանց հատուկ տեսական քննության (տես **Հյուբշման Հայրիխ**, Հայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների շրջանակներում, Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 2004, էջ 24: Հմմտ. նաև՝ **Գարրիելյան Յու.**, Հայերենը և նախահնդեվրոպական լեզուն, Եր., 2001, էջ 64): Այս երևույթի հիմնական պատճառներից մեկը, եթե ոչ՝ հենց հիմնականը, կարող է լինել այն, որ Հ. Հյուբշմանի աշխատանքն ընդհանուրհնդեվրոպաբանական չէր և կարող էր դուրս մնալ համեմատաբանների լայն շրջանակի տեսադաշտից:

ընդհանուրինդեվրոպական համակարգին հատկանշվել է բաղաձայնների տեղաշարժով, որի ընթացքում խուլերը և ձայնեղները փոխել են իրենց տեղերը⁶: Այն է՝ խուլերի կարգը վերածվել է պարզ ձայնեղների, պարզ ձայնեղների կարգը՝ պարզ խուլերի, իսկ վերջինն էլ խթանել է շնչեղ խուլերի կարգի անցումը շնչեղ ձայնեղների: Այդպիսի համակարգի վերականգնումը Հ. Պեդերսընը բացատրել է ընդհանուրինդեվրոպականում *d-ի և *g-ի համեմատությամբ «*b-ի բացակայության (կամ, հնարավոր է, խիստ հազվադեպ հանդիպելիության)»⁷ փաստով: Այդ առնչությամբ Ա. Մեյեն նկատում է, որ *b-ն «չի հանդիպում ոչ մի կարևոր ածանցում և ոչ մի վերջավորության մեջ», ապա, ըստ ամենայնի նկատի ունենալով նմանաձայնական բառերը, ավելացնում է. «... այն երկրորդային ծագում ունի բառերի մի մասում, որոնցում հանդիպում է»⁸: Թերևս ոչ առանց Հ. Պեդերսընի հետևողության՝ ընդհանուրինդեվրոպական լեզվում *b-ի հնարավոր գոյության առնչությամբ կասկած է հայտնել նաև ֆրանսիացի լեզվաբան Ա. Սարտինեն. «Որքանով այդ հնչույթը տեղադրված է *d, *g, *g^w կարգի և *p, *bh շարքի հատման կետում (ընդ որում՝ այդ կարգի և այդ շարքի գոյությունն արժանահավատորեն վերականգնված է), պիտի ենթադրել դատարկ վանդակի գոյությունը համակարգում»⁹: Ավելին, ըստ Ա. Սարտինեի՝ «... գործնականում *b հնչույթ գոյություն չի ունեցել »¹⁰:

1972 թ. խորհրդային լեզվաբաններ Թ. Գամկրելիձեն, Վյաչ. Իվանովը և Օ. Շիրոկովը, իսկ 1973 թ. գերմանացի լեզվաբան Պ. Հոպերը առաջարկեցին հնդեվրոպական բաղաձայնական համակարգի նոր հայեցակարգ, որում ավանդական («դասական») համակարգի պարզ ձայնեղ հպականների կարգը (*b, *d, *g) փոխարինվեց կատկայնացած խուլ հպականների կարգով ((*p'), *t', *K')¹¹: Ընդ որում, եթե սկզբնական՝ 1972-ի տարբերակում Թ. Գամկրելիձեն և Վյաչ. Իվանովը վերականգնում էին (I) կատկայնացածների (*t'), (II) շնչեղ ձայնեղների (*d^h) և (III) շնչեղ խուլերի (*t^h) կարգեր, այսինքն՝ շնչեղությունը համարում էին հնչույթաբանական հատկանիշ (այդպես էր նաև ավանդական համակարգում), ապա 1978-ի տարբերակում շնչեղությունը դիտում էին հնչյունաբանական հատկանիշ, հետևաբար միևնույն շարքում առանձնացվող շնչեղ-ոչ շնչեղ տարբերակները (օր.՝ *t/*t^h) համարվում էին միևնույն հնչույթի այլահնչակներ¹²: Ըստ Պ. Հոպերի՝ ավան-

6 SՆու Тронский И. М., նշվ. աշխ., էջ 40:
 7 Гамкредидзе Т. В., Иванов Вяч. Вс., նշվ. աշխ., էջ 7: Հմտ. նաև. «... Հնդեվրոպականության տիպորինակ ձեռնարկների մեծ մասը նշում է այն փաստը, որ գոյություն ունի նախահնդեվրոպականի համար վերականգնվող ձայնեղ երկշրթնային հպական *b-ի ծայրահեղ քիչ (կամ ընդհանրապես ոչ մի) անվիժելի օրինակ: Այդ հնչույթի ցածր հաճախականությունը (կամ, հնարավոր է, լիակատար բացակայությունը) չի կարող գոհացուցիչ բացատրություն ստանալ ավանդական հայեցակարգի շրջանակներում» (Бомхард А. Р., Очерк сравнительной фонологии так называемых «ностратических» языков, ВЯ, 1989, N 3, с. 37):
 8 Мейе А., նշվ. աշխ., էջ 115:
 9 Мартине А., Принцип экономии в фонетических изменениях, М., 1960, с. 123-124 (հմտ. Martinet André, Économie des changements phonétiques (traité de phonologie diachronique), Berne, 1955):
 10 Նույն տեղում, էջ 241:
 11 SՆու Гамкредидзе Т. В., Иванов В. В., Лингвистическая типология и реконструкция системы индоевропейских смычных («Конференция по Сравнительно-Исторической Грамматике Индоевропейских Языков» [12-14 декабря]. Предварительные материалы, М., 1972, էջ 15-18), Широков О. С., Кавказско-индоевропейские фонологические схождения («Конференция по Сравнительно-Исторической Грамматике Индоевропейских Языков» [12-14 декабря]. Предварительные материалы, М., 1972, էջ 92-93), Hopper P., Glottalized and murmured occlusive in Indo-European, "Glossa", 7, 2, 1973, էջ 96-134:
 12 SՆու Гамкредидзе Т. В., Иванов Вяч. Вс., Индоевропейский язык ..., էջ 16:

դական համակարգերում «բուն ձայնեղներ» կոչվածները «դրսևորում են կատկայնացած (խթանային-эктивный) հպականների տիպաբանական բազմաթիվ բնութագրեր, օրինակ՝ նրանք բացակայում են թերույթներում, չեն կարող կապակցվել միևնույն արմատի սահմաններում...»¹³:

Պ. Հոպերի կողմից վերականգնվող համակարգը Գամկրելիձե-Իվանովի համակարգից տարբերվում էր նրանով, որ այն հ.-ե. նախալեզվում շնչեղությունը բացառում էր նույնիսկ իբրև հնչյունաբանական հատկանիշ¹⁴: Վերոհիշյալ հեղինակների կողմից առաջադրված վարկածը Ա. Բոմհարդի «Հնդեվրոպական լեզվի հնչյութաբանական համակարգը» աշխատության մեջ ստացավ «Կատկային տեսություն» (Glottalic theory) անվանումը¹⁵: Նշելով, որ «Թ. Վ. Գամկրելիձեի, Վյաչ. Վս. Իվանովի և Պ. Զ. Հոպերի վարկածը լայն աջակցություն է ստացել հնդեվրոպաբանների շրջանում», ընդհանուրհնդեվրոպական լեզվում կատկային բաղաձայնների տեսությունը Գամկրելիձե-Իվանովի տարբերակով ընդունել է Ա. Բոմհարդը¹⁶: Ընդհանուրհնդեվրոպականում կատկային հպականների առկայության վարկածը պաշտպանել են նաև Ֆ. Կորտլանդը և Ա.-Ժ. Օդրիկուրը: Ֆ. Կորտլանդի առաջարկած տարբերակում պարզ ձայնեղների կարգը փոխարինվում է շնչեղ խուլերի կարգով (հմմտ. *t, *t', **th**)¹⁷, իսկ ֆրասսիացի լեզվաբան Ա.-Ժ. Օդրիկուրի հայացքների համար յուրահատուկը, թերևս, այն էր, որ «Բաղաձայնների (հպականների) տեղաշարժերը հնդեվրոպական լեզվում» աշխատության մեջ նախասկզբնական հնդեվրոպական հպականների համակարգում տարբերակելով կատկայնացածների կարգ՝ դրանց գոյությունն ընդունեց նաև գրաբարյան հայերենում (հմմտ. «... դասական հայերենն արտացոլում է նախահնդեվրոպական դրությունը»)¹⁸: «Ուշհնդեվրոպականում», որն ըստ էության համապատասխանում է այլ դասակարգումների ընդհանուրհնդեվրոպականին, ձայնեղների կարգ չի տարբերակում նաև ռուս լեզվաբան Ն. Անդրենը¹⁹:

Հ.-ե. համեմատական լեզվաբանության մեջ «կատկայինների տեսության» մշակման համար խթան են եղել հատկապես հետևյալ իրողությունները. 1) Հ. Պեդերսընի տեսակետն ընդհանուրհնդեվրոպականում պարզ ձայնեղների կարգի պակասավորության, մասնավորապես՝ *b-ի բացակայության մասին, 2) Է. Սեյիթի վարկածը հ.-ե. նախալեզվում կատկային բաղաձայնների առաջացման մասին, որը նա փորձեց հիմնավորել ամերիկահնդկացիական **նավախո, նուտկա և կվակիուտլե** լեզուներում համապատասխան հնչյութների կազմավորման օրինակով²⁰, 3) սեմական լեզուներին բնորոշ կատկային հնչյունների՝ որպես հպական բաղաձայնների

13 Hopper P., նշվ. աշխ., էջ 147:

14 Տե՛ս Хопер П. Дж., Типология праиндоевропейского набора сегментов, НЗЛ, вып. XXI, М., 1988, էջ 169:

15 Տե՛ս Гамкрелидзе Т. В., Иванов Вяч. Вс., նշվ. աշխ., էջ 15:

16 Տե՛ս Бомхард А. Р., նշվ. աշխ., էջ 37-38:

17 Kortlandt Frederik, Proto-Indo-European obstruents, IF, 83, 1978, p. 107-118:

18 Haudricourt André G., Les mutations consonantiques (occlusives) en indo-européen, "Collection linguistiques de la Société de Linguistiques de Paris", N 70, Paris, 1975, pp. 267-272 (հմմտ. նաև՝ Майрхофер М., նշվ. աշխ., էջ 146:)

19 Տե՛ս Андреев Н. Д., Периодизация истории индоевропейского праязыка, ВЯ, 1957, N 2, էջ 6-18:

20 Տե՛ս Сепир Эдвард, Глоттализированные проходные в навахо, нутка и квакиутле (с замечанием об индоевропейском), «Избранные труды по языкознанию и культурологии», М., 2002, էջ 336-354 (հմմտ. Sapir E., Glottalized continuants in Navaho, Nootka, and Kwakiutl (with a note on Indo-European), "Language", 1938, 14, էջ 248-274):

յուրահատուկ կարգի քննությունն Ա. Մարտինեի կողմից²¹, 4) պատմահամեմատական ուսումնասիրություններում տիպաբանական չափորոշիչները հաշվի առնելու մասին Ռ. Յակոբսոնի պահանջը²²: Ինչպես երևում է (2) և (3) կետերից՝ Է. Սեպիրը հնդեվրոպականում կատկայինների առաջացումը բացատրում է որպես նախալեզվի չորս կոկորդայինների (հմմտ. *, *, *, *, *x, *y) հետ ձայնորդների (*m, *n, *r, *l, *y, *w) կամ այլ բաղաձայնների միաձուլման արդյունք²³, իսկ Ա. Մարտինեն սեմական կատկայինների հարցը դիտարկում է հնդեվրոպա-սեմական նոստրատիկ լեզվամիության տիրույթում: Այսինքն՝ երկու դեպքում էլ հնդեվրոպականում կատկայինների կարգ ճանաչելու համար հիմք են ընդունվում առավելապես ոչ հնդեվրոպական լեզուների տվյալները: «Կատկայինների տեսության» տարբերակների համար, որոնց ամենից ավելի ամբողջական և հետևողական դրսևորումը Թ. Գամկրելիձեի և Վյաչ. Իվանովի «Հնդեվրոպական լեզուն և հնդեվրոպացիները» հիմնարար աշխատությունն է, ընդհանուր է այն, որ բոլորն էլ դասական հնդեվրոպաբանության կողմից վերականգնվող ձայնեղ հպականների կարգը փոխարինեցին կատկայինների կարգով (հմմտ. (*p'), *t', *k', *k^w)²⁴: Սակայն այն ժամանակ, երբ «կատկայինների տեսությունը» համընդհանուր հետաքրքրություն էր առաջացրել լեզվաբանների շրջանում, այն ընդունեցին ոչ բոլոր հնդեվրոպաբանները²⁵: Ավելին՝ եղան լեզվաբաններ, որոնք նախընտրեցին գործառել հպական բաղաձայնների քառանդամ (երիտքերականական, թերևս սխալ չի լինի ասել նաև՝ **բրուզմանական**) հայեցակարգով կամ առնվազն չբացատել դրա հնարավորությունը²⁶, բայց ոմանք էլ, առաջնորդվելով բնական լեզվաբանության սկզբունքներով, այն համարեցին առանձին փուլ հ.-ե. համեմատական լեզվաբանության մեջ²⁷:

2. Հ.-ե. *b-ի հարցը և «կատկայինների տեսությունը»

Ընդհանուրհնդեվրոպականում ձայնեղների կարգի գոյությունը մերժելու դրդապատճառը, ըստ ամենայնի, *b-ով օրինակների սակավաթիվությունն է, որը նախ հանգեցրել է *b-ի տեղում «դատարկ վանդակի» նշանակմանը, սպա տարածվել է ամբողջ կարգի վրա՝ դառնալով, օրինակ, ձայնեղների փոխարեն կատկայինների կարգ ենթադրելու հիմնական պատճառներից մեկը:

21 Տե՛ս **Martinet André**, Remarques sur le consonantisme sémitique, BSL, 49, 1953, էջ 67-68:

22 Տե՛ս **Якобсон Р.**, Типологические исследования и их вклад в сравнительно-историческое языкознание, «Новое в лингвистике» (այսուհետև՝ НЛ), вып. III, М., 1963, էջ 95-105:

23 Տե՛ս **Сепир Эдвард**, նշվ. աշխ., էջ 348-354:

24 Տե՛ս **Хонер П. Дж.**, Языки “decem” и “tailhun”: индоевропейская изоглосса, НЗЛ, вып. XXI, էջ 173-181, **Одри Ж.**, Типология и реконструкция, նույն տեղում, էջ 183-190, **Гамкрелидзе Т. В., Иванов Вяч. Вс.**, նշվ. աշխ., էջ 15:

25 Հմմտ. «... 1) բոլոր հիմնական հնդեվրոպական լեզուներում չկան կատկայնացած բաղաձայնների շարքեր և կատկայնացածների ու ոչ կատկայնացածների հակադրություններ. հայերենի որոշ բարբառներում խուլ հպականների կատկայնացման առկայությունն ակնհայտորեն երկրորդային քնույթի է՝ վրացերենի ազդեցություն է, 2) ոչ լիովին են պարզաբանվում այդ համակարգից, օրինակ, հնդկականի տիպի համակարգի անցման պայմանները ...» (**Джаукян Г. Б.**, Сравнительная грамматика армянского языка, Е., 1982, с. 22):

26 Տե՛ս **Семереньи О.**, Введение в сравнительное языкознание, М., 1980, էջ 65-83, 158-166, **Пизани В.**, Общее и индоевропейское языкознание, Общее и индоевропейское языкознание, М., 1956, էջ 136-140, **Тронский И. М.**, Общеславянское языкознание, էջ 39-40 (հմմտ. «Որպես հպականների ընդհանուրհնդեվրոպական համակարգի մերձավոր վերականգնում՝ Բրուզմանի տեսությունը մնում է ուժի մեջ», - նույն տեղում), **Одри Ж.**, Индоевропейский язык, НЗЛ, вып. XXI, էջ 28-29, **Майрхофер М.**, Индоевропейская грамматика. т. 2. Фонетика, НЗЛ, вып. XXI, М., 1988, էջ 146:

27 Տե՛ս **Գարրիկյան Յու.**, Հայերենը և նախահնդեվրոպական լեզուն, եր., 2001, էջ 7-8:

«Դատարկ վանդակ(ներ)» կարելի է դիտարկել բազմաթիվ լեզուների հնչույթային համակարգերի տարածամանակյա քննության դեպքում: Օրինակ, նախագրային հայերենը չի ունեցել **ղ(γ)** բաղաձայնը, բայց հին գրական հայերենում այն արդեն կար: Հին հայերենի **ղ-ն** սերել է **h.-ե.** ***l-ից**: Դասական գրաբարում **ղ(θ)**-ն ձայնորդ էր, բայց ուշգրաբարյան շրջանից սկսած վերածվել է շփական ձայնեղի՝ **ղ(γ)** և լրացրել է **լս(x)** պարզ խուլ հնչույթի ձայնեղ լծորդակցի տեղը, որը մինչ այդ «դատարկ վանդակ» էր հին հայերենի հնչույթային համակարգում (հմմտ. ***l>*ղ(*θ)>ղ(γ)**)²⁸: Նույնը կարելի է ասել արդի հայերենի **Ֆ(f)**-ի մասին, որը չի եղել հին հայերենում և հայերենի հնչույթային համակարգ մուտք է գործել ուշգրաբարյան կամ վաղմիջինհայերենյան փուլում: Իսկ գրաբարյան հայերենում օտար լեզուների, օր.՝ հին հունարենի **φ(f)**-ն գրադարձվել է **փ(p^h)**-ով: Վերջինը շնչեղ խուլ էր, ի տարբերություն **Ֆ(f)**-ի, որը հայերենի հնչույթային համակարգում համալրել է պարզ խուլերի կարգը (հմմտ. **δάφνη** «դափնի» > **հյ. դափնի**, **φασιανός** «փասիան» > **հյ. փասիան** «մի տեսակ թռչուն» ևն): Ռուսերենի հնչույթային համակարգում ևս **φ(f)**-ն համեմատաբար ուշ շրջանի երևույթ է: Այդ հնչույթը չի եղել նաև հին սլավոներենում: Ճիշտ է, դեռևս առաջին այբուբեններում եղել է **ф** տառը, «բայց սկզբնապես այն եղել է միայն գրության միջոց», որով արտահայտվել է **[p]** հնչյունը²⁹: Հին սլավոներենում հունարենի **φ-ն** փոխարինվել է **в[v]** կամ **п[p]** հնչյունով (հմմտ. **просфора-ի** փոխարեն, **пиникъсь` феникс-ի** փոխարեն)³⁰: Նախքան **<F>**-ի հնչույթայնացումը, ռուսերենում **[f]**-ն և **[v]**-ն գտնվել են ենթահնչույթային հարաբերության մեջ. այդ փուլում **<V>**-ն հնչույթաբանորեն չի եղել ձայնեղ, այլ «հարել է ձայնորդներին, որոնց համար ձայնեղությունը տարբերակիչ չի եղել»³¹: Այս փաստերը ցույց են տալիս, որ ինչպես հին սլավոներենում, այնպես էլ ռուսերենում, մինչև **<F>** հնչույթի ի հայտ գալը, նրա տեղում եղել է «դատարկ վանդակ»: Հետևաբար, մինչև այդ փուլը **[v]**-ի ձայնեղությունը հնչյունաբանական հատկանիշ էր, բայց ոչ հնչույթաբանական, որովհետև չունեի տարբերակիչ արժեք և հակադրություն չէր ձևավորում: Ասվածը, սակայն, չի նշանակում, թե մինչև հին հայերենի **ղ(θ)**, արդի հայերենի **Ֆ(f)**, հին սլավոներենի և արդի ռուսերենի **ф(f)** հնչույթների կազմավորումը, նշված լեզուներում չեն եղել ձայնեղների և խուլերի կարգերը:

Լեզվական, այդ թվում՝ հնչույթային համակարգը միշտ ձգտում է համաչափության, բայց երբեք դրան չի հասնում լիովին: Որպես կանոն, համաչափ է լինում միայն նրա «կենտրոնական բլոկը», իսկ եզրամասն անհամաչափ է, որն արտահայտվում է հնչույթային լծորդությունների անհամաչափությունը³²: Ըստ էության, անհամաչափությունը բնորոշ է եղել նաև **h.-ե.** նախալեզվի հնչույթային համակարգին: Ինչպես նշվեց, դեռևս **Հ. Հյուբը-**

28 Տես Աճառյան Հ., Հայկական Զ. (Երբ **l** դարձավ **ղ**), Տեղեկագիր ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի, N 5, 1948, էջ 33-40, Աղայան Էդուարդ, Հայերենի հնչույթային համակարգի պատմությունից, 'սույնի' Լեզվաբանական հետազոտություններ, Ե., 2003, էջ 87-113, Джаукян Г. Б., Очерки дописьменного периода армянского языка, Е., 1967, էջ 232-235, Պետրոսյան Վարդան Զ., Հին հայերենի **լ(l)** և **ղ(θ)** ձայնորդների ծագումը և հնչարանական արժեքայնությունը, «Վեմ», 2017, N 3, էջ 97-105:

29 Տես Мейе А., Общеславянский язык, М., 1951, էջ 37:

30 Տես Горшков А. И., Старославянский язык, М., 1974, էջ 96, Хамбургаев Г. А., Старославянский язык, М., 1974, էջ 99-101, Журавлев В. К., Диакроническая фонология, М., 1986, էջ 171:

31 Касевич В. Б., Фонологические проблемы общего и восточного языкознания, М., 1983, с. 49.

32 Տես Журавлев В. К., նշվ. աշխ., էջ 166:

մանի ժամանակներից շատերն են խոսել հ.-ե. պարզ ձայնեղների կարգում *b-ի տեղում «դատարկ վանդակի» մասին: Մի բան է, սակայն, «դատարկ վանդակի» առկայությունը հնչույթային կարգի մեջ, բոլորովին այլ բան է ամբողջ կարգի բացակայությունը: Հնդեվրոպական հին լեզուների մեծ մասը (հին հնդկերեն, ավեստա, հին պարսկերեն, հին սլավոներեն, լիտվերեն, հին հունարեն, լատիներեն, հին իռլանդերեն, հին հայերեն, գոթերեն, հն վ. գերմաներեն, հին անգլերեն, ալբաներեն ևն) ունեցել է ձայնեղների կարգը: Այդ կարգը չեն ունեցել կամ ենթադրվում է, որ չեն ունեցել թոխարական և խեթալուվիական լեզուները: Դժվար է պատկերացնել, թե ընդհանուրհնդեվրոպական լեզվում ձայնեղների կարգի բացակայության պայմաններում հին հ.-ե. լեզուների մեծ մասը ինքնուրույնաբար ինչպե՞ս զարգացրեց պարզ ձայնեղների կարգը: Եթե ենթադրենք, որ պարզ ձայնեղների կարգը նշված լեզուներում ինքնուրույն զարգացման արդյունք է, դարձյալ պիտի ընդունել, որ այդ կարգի առաջացման միտումը եղել է նախքան հիմք լեզվից անջատվելը: Սակայն, առավել հավանական է կարծել, որ ընդհանուրհնդեվրոպականում ձայնեղների կարգն ընդհանուր առմամբ իրողություն էր: Ինչ վերաբերում է պարզ ձայնեղների կարգը չտարբերակող կամ ոչ հստակ տարբերակող լեզուներին, ապա պիտի նկատի ունենալ հետևյալը. 1) տարբեր լեզուներում փոփոխությունները չեն ունենում միևնույն արագությունը, և զարգացումները ոչ միշտ են ընթանում միևնույն ուղղությամբ, հետևաբար արդյունքները ևս չեն կարող լինել նույնական. 2) բացառված չէ, որ հիմք լեզվից ավելի վաղ անջատվելու պատճառով թոխարական և խեթալուվիական լեզուներում հպականների համակարգի համաչափությանը միտված գործընթացները ինչ-ինչ պատճառներով, օր.՝ ենթաշերտային ազդեցության, մնացել են անավարտ: Այսպես, բաղաձայնների առաջին տեղաշարժը (իհարկե, եթե այդպիսին առհասարակ ընդունվի), Ա. Մեյեի կարծիքով, գերմանական լեզուների համեմատությամբ հայերենում չի ամբողջացել³³: Այդ հանգամանքն էլ, ըստ Գ. Ջահուկյանի, «... բերել է երկրորդ տեղաշարժի մի քանի երևույթների առաջացմանը» հայերենում³⁴:

Դասական հնդեվրոպաբանությունը, որն ընդունում է պարզ ձայնեղների գոյությունը հնդեվրոպական նախալեզվում, *b-ն վերականգնում է հետևյալ արմատներում ու բառերում. *bel-₁ «ուժ, ուժեղ» (հմմտ. վեդ. հնդկ. bála- «ուժ», լատ. dē-bilis «անուժ, թույլ», հն. սլավ. boljiti «ավելի մեծ», հուն. βελτιών «ավելի լավ»³⁵), *bel-₂ «ձահիճ» (հմմտ. սլավ. блато (<*bolto), անգլ. pool «ջրափոս»/ «лужа»)³⁶, *belō «փորում են» (հմմտ. հյ պեղեմ, հն իռլնդ. belach «կիրճ, արահետ, անցում, ճանապարհ», կիմր. bwlch «ձեղք»), *pibeti «խմում է» (հմմտ. սնսկ. pibatı «խմում է», իրան. *pibat-, լատ. bibō «խմում են», հն սլավ. пѣти «խմում է», հն իռլնդ. ibid «խմեք», հյ. քսիպեմ «խմում են»),

33 Stéu Meillet A., Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, Vienne, 1936, էջ 26, նույնի՝ Les dialectes indo-européens, Paris, 1950, էջ 91:

34 Stéu Джаукян Г. Б., Очерки ... , էջ 83:

35 ըստ Մ. Մայրիհոֆերի՝ հուն. βελτιών-ը «հավանական է՝ *βελτιών-վեդ. bálīān-ի «ավելի ուժեղ» ձևափոխությունն է» (տես Майрхофер М., Индоевропейская грамматика, էջ 127: ⁹¹). Հոպերը, ընդհակառակը, նկատելով, որ «hoqutot *b-ի վերականգնման փաստարկները բավականին թույլ են», ավելացնում է. «bel- արմատի ենթադրյալ ռեֆլեքսներից (?) հետևում է, ըստ երևույթին, բացառել հուն. βελτιών-ը, իսկ լատ. debilis-ը, անկասկած, կապված է débère բայի հետ» (Хопер П. Дж., Языки “decem” и “taihun”..., նույն տեղում, էջ 180, ծնթղթ. 1):

36 Օրինակն ըստ Красухин К. Г., Введение в индоевропейское языкознание, М., 2004, էջ 45 գրքի:

dheub-** «խոր, լիքը» (հմմտ. գոթ. *diups*, լիտ. *dubùs* «խոր», հն սլավ. *dǔbrĭ* «կիրձ, լեռնագոգ», գալլ. *Dubno-rix* «աշխարհի տիրակալ», հն իռլնդ. *domun* «աշխարհ»), ***treb-** «շինություն, բնակարան» (հմմտ. լատ. *trabs* «գերան, կտուր», օսկ. *trībúm* «(դեպի) տուն» (“*domum /домой*”), հն կիր. *treb* «կացարան», հն վալ. *treb* [tref] «կացարան», գոթ. *þáurps* «վարած արտ», լիտ. *trobà* «տուն, շենք»), *(s)**leib-** (հմմտ. հուն. *λείβω* «հեղում եմ, ձոնում եմ», լատ. *libāre* «ձոնելը, հեղելը», հն իռլնդ. *sliab* «լեռ, լեռնոտ տեղ», հն վրն գրմ. *slifan* «սայթաքել»), ***steibe-** (հմմտ. հյ. **ստիպեմ** «հարկադրում եմ»)՝ ***steibo-**→step-**ի դեպքում «հաճախակի, շտապողականություն» (հմմտ. հուն. *σείβω* «տրորում եմ, քայլում եմ, տառապում եմ»): Նկատի ունենալով ստուգաբանությունների փոքրաթիվությունը, որոնցում ավանդականորեն վերականգնվում է *b-ն, ինչպես նաև այն, որ աշխարհի տարբեր լեզուներում հաճախ ոչ թե b-ն է անցնում h-ի կամ θ-ի, այլ p-ն (հմմտ. ***pǣtér**>հյ. (հաիր>) հայր, խեթ. *atta-* «հայր» հն իռլնդ. *athir* «հայր», ***ped**>հյ. հետ(-p)/ ***pod**>հյ. **nu**(ն), ***oǰi-pā-**>հյ. հովի (h**oviu**)), Հ. Պեդերսընը եզրակացրել է, որ նախահնդեվրոպականում *b-ի տեղում եղել է խուլ p³⁷: Նրա կողմից ընդհանուր-հնդեվրոպականի համար վերականգնվող հպականների համակարգը, որի տարբերությունը ավանդական համակարգից պարզ ձայնեղների կարգի «պակասավորությունն» է («дефектность»), կարող է գնահատվել որպես անցումային վիճակ նախահնդեվրոպականի և h.-ե. առաջին բարբառների (= լեզուների) միջև, որոնք ունեցել են b-ն: Այլապես, դժվար կլիներ բացատրել ձայնեղ հպականների կարգ չունեցող համակարգից անցումը պատմականորեն վկայված h.-ե. լեզուների՝ այդպիսի կարգ տարբերակող համակարգերին:

Հնչույթաբանական տիպաբանության տեսանկյունից հնարավոր համարելով հպական բաղաձայնների՝ Հ. Պեդերսընի կողմից առաջարկված համակարգի վերականգնումն ընդհանուրհնդեվրոպականում, այնուամենայնիվ, նախահնդեվրոպական համակարգի համար «հպականների այդպիսի «հեռավոր» վերականգնումները», ըստ Ի. Տրոնսկու, կառուցված են «երերուն հիմքի վրա»³⁸:

Պիտի նկատի ունենալ, որ լեզվաբանների կարծիքները միանշանակ չեն ոչ h.-ե. *b-ի և ոչ էլ առհասարակ լեզուներում b-ի ու p-ի հանդիպելիության հարցի շուրջ: Այդ հարցադրումների առնչությամբ, մասնավորապես, նշվում է, որ՝ 1) քիչ հանդիպելով բառակցքի դիրքում՝ h.-ե. *b-ն բավականին բարձր հաճախականություն ունի բառամիջում³⁹, 2) *b-ով օրինակների հավաստիությունը չընդունելու դեպքում «հարկ կլինի ընդունել լեզվի տիպաբանորեն հազվագյուտ տիպ առանց b-ի»: այդպիսի լեզուները քիչ են, ուստի ենթադրություն է արվում, որ իրականում դժվարությամբ վերականգնման ենթարկվող հնույթը p-ն է, այլ ոչ թե b-ն, իսկ p չունեցող լեզուների թիվը գզալիորեն մեծ է⁴⁰:

37 Տե՛ս **Майрхофер М.**, *Индоевропейская грамматика*, էջ 124 (հմմտ.՝ **Pedersen H.**, *Die gemeinindoeuropäischen und die vorindoeuropäischen Verschlusslaute*, Kopenhagen, 1951, 16):

38 Տե՛ս **Тронский И. М.**, նշվ. աշխ., էջ 41:

39 Տե՛ս **Джаукян Г. Б.**, *Сравнительная грамматика ...*, էջ 22 (հմմտ. «... եթե հաշվի առնենք *b հնչույթի դիրքերի ամբողջությունը, ապա այն համակարգի լիիրավ անդամ է»,- նույն տեղում):

40 Տե՛ս **Герценберг Л. Г.**, *Краткое введение в индоевропестистику*, Санкт-Петербург, 2010, էջ 30-31: Կ. Կրասուլինը նկատում է, որ *b-ի հարցում «ընդհանուրհնդեվրոպական բաղաձայնական համակարգի դա-

Անշուշտ, ընդհանուրինդեվրոպականում *b-ի առկայության/բացակայության հարցադրումն ունի որոշակի հիմքեր, բայց այդ հարցը քննելիս պիտի ելակետ ընդունել ծագումնաբանական, այլ ոչ թե տիպաբանական կամ ընդհանրությամբանական իրողությունները: Իսկ տիպաբանությանը դիմելիս պիտի մնալ լեզվական ցեղակցության, տվյալ դեպքում՝ հնդեվրոպական լեզվաընտանիքի սահմաններում, որովհետև այլհամակարգային, այն է՝ ոչ ցեղակից լեզուների տվյալները կարող են միայն վկայել երևույթի հավանականության մասին, բայց ոչ՝ նրա առկայության կամ բացակայության: Օրինակ, Ռ. Յակոբսոնի սահմանած համաժամանակյա հնչույթաբանական ընդհանրությի համաձայն՝ «լեզուն չունի [θ] տիպի շփական (сширает), եթե նրանում չկա ո՛չ [t], ո՛չ էլ [s], կամ՝ լեզվում չկան [č] տիպի հպաշփականներ, եթե նրանում չկան ո՛չ [t], ո՛չ էլ [š]: Սակայն կիկապու լեզվում կա [t] և [θ], բայց չկա [s]»⁴¹:

Ի տարբերություն 20-րդ դարի կեսերի այն հնդեվրոպաբանների (Հ. Պեդերսըն, Ա. Մարտինե, Ռ. Յակոբսոն, Թ. Գամկրելիձե, Վյաչ. Իվանով, Ֆ. Կորտլանդ և ուրիշներ), որոնք հ.-ե. *b-ի հարցը լուծելիս որոշիչ նշանակություն էին տալիս տիպաբանության հնարավորություններին, Հ. Հյուբշմանը հ.-ե. ձայնեղների կարգում շրթնային բաղադրիչի տեղն ազատ էր թողնում՝ հիմք ընդունելով միայն ծագումնաբանական բնույթի փաստերը, որովհետև նրա ժամանակներում դեռևս ընդունված չէր լեզուների համեմատաբանական և տիպաբանական հայեցակերպերի համադրված քննությունը:

Հ.-ե. հին լեզուների մեծ մասը տարբերակել է պարզ ձայնեղների կարգը, այդ թվում՝ նրա շրթնային ներկայացուցիչը՝ b-ն: Այսպես, տարբեր լեզվաձյուղեր ներկայացնող տասներկու լեզուներից յոթի (հին հնդկերեն, ավեստա, հին սլավոներեն, լիտվերեն, հին հունարեն, լատիներեն, հին իռլանդերեն) b-ի համար դասական հնդեվրոպաբանությունը հ.-ե. նախալեզվում վերականգնում է *b, իսկ հինգում (խեթերեն, թոխարական լեզուներ՝ A և B, հին հայերեն, գոթերեն) *b-ի համապատասխանն է p-ն, որը համարվում է բաղաձայնական տեղաշարժի արդյունք (այսինքն՝ ծագումնաբանորեն դարձյալ b է⁴²): Նշված տասներկու լեզուներից ութում (ավեստա, լատիներեն, գոթերեն, հին իռլանդերեն, հայերեն, ալբաներեն, լիտվերեն, սլավոներեն) b-ն հ.-ե. *b^h-ի համարժեքն է՝ չհաշված այն, որ հ.-ե. *b^h-ից է սերում նաև հին հնդկ. b^h-ը (վեդայական և սանսկրիտի)⁴³: Այսինքն՝ դարձյալ սերում է ձայնեղից, այլ ոչ թե՛ խուլից: Պիտի նկատի ունենալ նաև, որ հաշվումների համար հիմք ընդունված լեզուները ոչ միշտ են ներկայացնում համապատասխան ձյուղի ամբողջական պատկերը: Այսպես, եթե գոթերենում հ.-ե. *b-ն ներկայացված է p-ով, ապա հն վ. գերմ.-ում ներկայացված է b-ով. հմմտ. *skæb- / *skāb- > հն վ. գրմ. scaban «քերել, ճանկոել, կեղևել»: Ճիշտ է, գերմանական հին լեզուներում ոչ բոլոր դեպքերում է հ.-ե. *b-ն պահ-

սական վերականգնումը հակասության մեջ է տիպաբանական տվյալների հետ»։ մի կողմից՝ հոգուտ *b-ի բերվող սակավաթիվ օրինակները «ոչ լիովին են արժանահավատ», մյուս կողմից, սակայն, ըստ լեզվական ընդհանրությունների տեսության՝ *p-ի առկայությունը ենթադրում է նաև *b-ի առկայություն (տես Красухин К. Г., Введение ... , էջ 56):

41 Хоккетт Ч. Ф., Проблема языковых универсалий, НЗЛ, вып. V, М., 1970, с. 72:

42 Стн Мейе А., Введение ... , էջ 115, Красухин К. Г., նշվ. աշխ., էջ 45:

43 Стн Мейе А., նշվ. աշխ., էջ 113, Красухин К. Г., նշվ. աշխ., էջ 46:

պանել իր հպական բնույթը⁴⁴ (b-ն, ինչպես նաև d-ն և g-ն, հպական է եղել բառասկզբում, ոնգայինից հետո, կրկնակ կիրառության մեջ՝ bb, իսկ մյուս դիրքերում եղել է շփական. հպականությունը և շփականությունը գերմանական պարզ ձայնեղների դեպքում ոչ թե հնչույթաբանական, այլ հնչյունաբանական հատկանիշներ էին⁴⁵), բայց դրանից հարցի էությունը չի փոխվում, որովհետև b-ն, լինի հպական, թե շփական, երկու դեպքում էլ ձայնեղ է: Խեթայուվիական լեզուներում, մասնավորապես՝ հիերոգլիֆային խեթերենում և լուվիերենում, b-ն համարվում է h.-ե. *b^h-ի, իսկ p-ն՝ *b-ի տեղաշարժի արդյունք⁴⁶, սակայն ոչ հազվադեպ *b^h-ն արտացոլվել է նաև p-ով (հմմտ. *néb^hos>խեթ. nepi-iš «երկինք»)⁴⁷: Ըստ էության, վերոհիշյալը ևս հիմք է տալիս ասելու, որ ինչպես *b^h>b, այնպես էլ *b>p անցումը վկայում է b-ի առկայության մասին: Նշված օրինակներին կարող են ավելանալ նաև b ունեցող նմանաձայնական բառերը (հմմտ. *bab->hy բաբէ /babē-/ բան «խոսք»-ի դեպքում. զարմանք արտահայտող ձայնարկություն (հմմտ. հուն. βαβαῖ, παπαῖ «ամիս, օյ»), *bu-> hy բու («сова»), բուէճ /buēč/ «филин»). հմմտ. ն. պրսկ. bām «բու», հուն. βῦξα «բվեճ», լատ. bōbō «բվեճ»), ինչպես նաև՝ հուն. βῆβροϛ «օտարերկրացի», լատ. balbus «կակազ» («зайка») ն: Որքան էլ որ այդ կարգի բառերին մեծ նշանակություն չի տրվում ծագումնաբանական քննություններում (դրանք համարվում են հիմնականում երկրորդային ծագման), բայց և այնպես նմանաձայնությունները ևս h.-ե. նախալեզվում համապատասխան հնչույթի/հնչյունի (տվյալ դեպքում՝ b-ի) առկայության վկայություններ են: Հետևաբար, առնվազն ընդհանուրհնդեվրոպականում *b-ի գոյությունը մերժելը ոչ միայն միանշանակ չէ, այլև բավարար չափով հիմնավորված չէ: Հ.-ե. հպականների համակարգում շրթնային ձայնեղ չտարբերակելը կարող է արդարացված լինել, թերևս, նախահնդեվրոպականի (=վաղհնդեվրոպականի) համար: Այլապես հնարավոր չէ բացատրել ոչ միայն ձայնեղների կարգ չունեցող համակարգից անցումը շրթնային ձայնեղի կարգ ունեցող համակարգի, այլև՝ շնչեղ և ոչ շնչեղ ձայնեղների հնչույթաբանական կարգերը տարբերակող համակարգի, որպիսին առկա էր հին հնդկերենում: Այդպիսի անցումը հնարավոր է, եթե հիմնավորվի, որ հին հնդկերենում շնչեղ ձայնեղների կարգը երկրորդային ծագում ունի, այն է՝ ձևավորվել է տիբեթաբիրմանական և դրավիդյան լեզուների ազդեցությամբ, ինչպես որ «հավանական» են համարել առանձին հնդեվրոպաբաններ⁴⁸, իսկ պարզ ձայնեղների կարգն էլ բացառապես

44 Տե՛ս **Прокош Э.**, Сравнительная грамматика германских языков, М., 1954, էջ 61:

45 Հմմտ. «... այդ հնչյունները կազմել են հնչույթների յուրահատուկ դաս, որոնց տարբերակները կարող էին իրացվել մերթ՝ որպես շփականներ, մերթ էլ՝ որպես հպականներ» (տե՛ս Сравнительная грамматика германских языков, т. II, М., 1962, էջ 47): Հմմտ. նաև. «... b, d, g ձայնեղ հպականները չեն եղել ինքնուրույն հնչույթներ, այլ գործերենում եղել են ձայնեղ շփականների տարբերակները» (**Гухман М. М.**, Готский язык, М., 1958, էջ 60):

46 Տե՛ս **Иванов Вяч. Вс.**, Общеиндоевропейская, праславянская и анатолийская языковые системы, М., 1965, էջ 41:

47 Ընդ որում, սեպագրերում, որպես կանոն, բաղաձայնի կրկնակ գրությամբ արտացոլվել է խուլը, իսկ մեկ գրով՝ ձայնեղը (հմմտ. pp=p, p/b=b), այդ թվում՝ ձայնեղների համար նախատեսված կրկնակ գրերով նույնպես կարող էր արտացոլվել խուլը՝ պարզ կամ շնչեղ (հմմտ. dd=t/t^h. ddedi [tedi] «հայր», ուր dd-ն արտացոլում է h.-ե. *t-ն), իհարկե՝ որպես հնչյունաբանական տարբերակներ կամ այլահնչակներ (տե՛ս **Королев А. А.**, Хетто-лувийские языки, Языки Азии и Африки, т. I, М., 1976, էջ 17-18):

48 Տե՛ս **Прокош Э.**, նշվ. աշխ., էջ 29: Ըստ Թ. Բարրոուի՝ օր., սանսկրիտի bala-ն «ուժ» կա նաև դրավիդյան լեզուներում՝ b=b և b-v համապատասխանություններով (տե՛ս **Барроу Т.**, Санскрит, М., 1976, էջ 358):

հ.-ե. շնչեղ ձայնեղների տեղաշարժի արդյունք է, ինչպես հայերենում և գերմանական հին լեզուներում:

Սակայն, որքանով որ առանց շնչեղ խուլերի կարգի տիպաբանորեն հավանական չի համարվում շնչեղ ձայնեղների կարգի գոյությունը, այնպես էլ առանց ոչ շնչեղ (= պարզ) ձայնեղների կարգի հավանական չէ շնչեղ ձայնեղների կարգի գոյությունը:

3. Հ.-ե. շնչեղ ձայնեղների հարցը և «կատկայինների տեսությունը»

«Կատկայինների տեսության» կողմնակիցներն ընդհանուր առմամբ մերժում են նաև դասական հնդեվրոպաբանության կողմից վերականգնվող շնչեղ ձայնեղների՝ որպես հնչույթաբանական կարգի գոյությունն ընդհանուր հնդեվրոպականում: Եթե Գամկրելիձե-Իվանովի համակարգում շնչեղները պարզ ձայնեղների հետ կազմում են հնչույթաբանական մեկ կարգ՝ որպես միևնույն հնչույթի դիրքային տարբերակները (հմմտ. *b^h/b, *d^h/d, *G^h/G)⁴⁹, ապա, օրինակ, Ֆ. Կորտլանդն առհասարակ մերժում է ձայնեղների կարգը՝ նրանց տեղում վերականգնելով շնչեղ խուլեր (հմմտ. *t-*t’-*th)⁵⁰: Եթե հպականների քառանդամ համակարգում (հմմտ. *d-*dh-*t-*th) շնչեղ ձայնեղների կարգի վերականգնումը տիպաբանական նկատառումներով օրինաչափ է դիտվում, որովհետև առկա է նրա շնչեղ խուլ լծորդը, բայց խնդրահարույց կարող է լինել ծագումնաբանական տեսանկյունից, ապա եռանդամ համակարգերում, որոնցում, որպես կանոն, չի վերականգնվում շնչեղ խուլերի կարգը (հմմտ. *d-*t-*d^h), շնչեղ ձայնեղների կարգի վերականգնումը խոցելի է համարվում նաև տիպաբանական տեսանկյունից⁵¹: Տիպաբանական չափորոշիչը կարևորել են հատկապես «կատկայինների տեսության» ներկայացուցիչները՝ հիմք ընդունելով Ռ. Յակոբսոնի կողմից ձևակերպված հետևյալ ընդհանրույթը. «Որքանով ինձ հայտնի է, չկա ոչ մի լեզու, որտեղ /t-d/ զույգին ավելանար շնչեղ ձայնեղ /dh/, բայց բացակայեր նրա խուլ համապատասխանը՝ /th/, այն ժամանակ, երբ /t/, /d/ և /th/ հաճախ է հանդիպում առանց համեմատաբար հազվադեպ /dh/-ի»⁵²: Ըստ այդմ՝ «նախահնդեվրոպական լեզվում /t/-/d/-/dh/ երեք հնչույթներով գործառող տեսությունները պիտի վերանայեն իրենց հնչույթաբանական

49 Տե՛ս Գամկրելիձե Թ. Վ., Իվանով Վյաչ. Վ., Индоевропейский язык ... , էջ 16:

50 Տե՛ս Kortlandt Frederik, Proto-Indo-European obstruents, IF, 83, 1978, էջ 107-118, Одри Ж., Типология и реконструкция, НЗЛ, вып. XXI, էջ 189: Հմմտ. նաև. «... նախալեզուն ունեցել է պարզ ուժեղ, կատկայնացած թույլ և շնչեղ թույլ հպականներ, որոնք համապատասխանում են ավանդական t, d, dh-ին: Բոլոր հպականները տվորբար եղել են խուլ, ինչպես ժամանակակից իսլանդերենում և արևելահայերենի հարավային բարբառներում: Դա համաձայնում է նախահնդեվրոպական շփական ձայնեղ s-ի նմանակի (аналога) բացակայության հետ» (Кортланд Ф., Праиндоевропейские глоттализованные смычные, ВЯ, 1985, N 4, с. 52):

51 Ասվածը չի վերաբերում, օրինակ, «կատկայինների տեսության» Ֆ. Կորտլանդի տարբերակին, որում շնչեղ ձայնեղների փոխարեն վերականգնվում են շնչեղ խուլեր, որովհետև այդ տեսությունը պարզ ձայնեղների փոխարեն վերականգնում է կատկային խուլերի կարգ (տե՛ս Kortlandt Frederik, նշվ. աշխ., էջ 107-118, Одри Ж., նշվ. աշխ., էջ 189, Кортланд Ф., նշվ. աշխ., էջ 52):

52 Якобсон Р., Типологические исследования и их вклад в сравнительно-историческое языкознание, НЛ, вып. III, М., 1963, с. 103: Կ. Կրասուլինը Ռ. Յակոբսոնի այդ պահանջը ձևակերպում է հետևյալ կերպ. «... չի կարելի վերականգնել ՏՀ-ներով նշույթավորված հնչույթների շարքեր և կարգեր՝ նրանց հետ լծորդակցվող չնշույթավորվածների բացակայության դեպքում» (տե՛ս Красухин К. Г., նշվ. աշխ., էջ 54):

էութեան հարցը»⁵³: Որպէս հնչույթաբանական ընդհանրույթ՝ ասվածը կարող է դասվել վիճակագրականների շարքին, բայց ոչ՝ բացարձակների, հատկապէս, երբ խոսքը վերաբերում է նախալեզվական վիճակին, որի մասին մեր պատկերացումները միջնորդավորված են և ունեն հավանականության որոշակի աստիճան: Պիտի նկատել, որ անցած շուրջ երկու հարյուր տարվա ընթացքում դեռևս չի առաջարկվել հ.-ե. նախալեզվի, այդ թվում՝ հնչույթային համակարգի որևէ հայեցակարգ, որը չվիճարկվեր գիտնականների կողմից:

Հնդեվրոպաբանության մեջ ընդունված պատկերացման համաձայն՝ նախալեզվում շնչեղ ձայնեղների կարգի վերականգնումը հիմնվում է հին հնդկերենի տվյալների վրա, քանի որ այն այդպիսի կարգ տարբերակող միակ լեզուն էր հ.-ե. լեզվաընտանիքում (հմմտ. «Պայթականների հնդեվրոպական համակարգի մասին դասական պատկերացումը, շարադրված Կարլ Բրուգմանի հիմնարար կոմպենդիումում և մինչև այժմ արտացոլված բազմաթիվ ձեռնարկներում, հնդեվրոպականի վրա է տեղափոխել վեդայական արտաբերական հատկանիշները»⁵⁴): Նշված հանգամանքը հարուցել է լեզվաբանների թերահավատությունն այդպիսի վերականգնման հավաստիության առնչությամբ: Հին հնդկերենում շնչեղ ձայնեղների առկայությունը է. Պոռկոշը բացատրել է տարածաշրջանի լեզուների (տիբեթաբիրմանական և դրավիդյան), իսկ շնչեղ խուլերինը՝ Հնդկաստանի բնիկների լեզվի ենթաշերտային ազդեցությամբ⁵⁵: Ուստի, այդօրինակ պատկերացման համաձայն՝ հին հնդկերենում ևս շնչեղ ձայնեղների կարգը նախասկզբնական, այսինքն՝ հնդեվրոպական չէր: Իսկ հ.-ե.-ում շնչեղ ձայնեղների վերականգնումը, նրա կարծիքով, «այն փուլի լեզվաբանական գիտության մնացուկ է, երբ սանսկրիտը համարվում էր հիմնական հնդեվրոպական լեզուն»⁵⁶: Թ. Բարրոն տարածաշրջանի, մասնավորապես՝ մունդա և դրավիդյան լեզուների ազդեցությամբ բացատրելով հին հնդկերենում, այսպես կոչված, **ցերեբրալ** (церебральный, какуминальный) բաղաձայնների առաջացումը (հմմտ. է, լի, զ, զի, դ, ղ), որոնք չունեին հ.-ե. մյուս լեզուները⁵⁷, շնչեղ ձայնեղների կարգի առնչությամբ գրում է. «... առանց հատուկ կասկածների կարելի է այն վերագրել նախալեզվին, որովհետև հնչույթի ոչ մի ուրիշ տեսակ չի կարող այդքան հեշտ բացատրել տարբեր նորակազմությունների ի հայտ գալը»⁵⁸: 1950-ականների վերջին և 60-ականների սկզբին Հ. Ֆոգտը⁵⁹, Է. Բենվենիստը⁶⁰ և Ա. Ղարիբյանը⁶¹ շնչեղ ձայնեղների հնչույթային կարգ վերագրե-

53 Նույն տեղում:

54 **Майрхофер М.**, նշվ. աշխ., էջ 122, **Макаев Э. А.**, Общая теория сравнительного языкознания, М., 1977, с. 53-54:

55 Տե՛ս **Прокош Э.**, նշվ. աշխ., էջ 29: Այս պատկերացման հիմքում եվրոպան հնդեվրոպական նախահայրենիք համարելու վարկածն է, ըստ որի՝ հնդկական ցեղախմբերը բնիկ չէին իրենց պատմական հայրենիքում:

56 **Прокош Э.**, նշվ. աշխ., էջ 30: Շնչեղ ձայնեղների կարգը հ.-ե.-ի համար կանխադրել էր Գ. Կուրցիուսը (նույն տեղում, էջ 28):

57 Տե՛ս **Барроу Т.**, նշվ. աշխ., էջ 348-349:

58 Նույն տեղում, էջ 68:

59 Տե՛ս **Фогт Г.**, Заметки по армянскому консонантизму, ВЯ, 1961, N 3, էջ 41: Ավելի վաղ այդ խնդրին Հ. Ֆոգտը անդրադարձել էր «Հայերենի հպականները» աշխատության մեջ (հմմտ. **Vogt H.**, Les occlusives de l'arménien, NTS, XVIII, 1958, էջ 143 և հջ.):

60 Տե՛ս **Benveniste E.**, Проблемы армянского консонантизма, 1961, ВЯ, N 3, էջ 38: Է. Բենվենիստն այդ մասին գրել էր նաև «Բաղաձայնական տեղաշարժը և ժամանակակից բարբառները» ուսումնասիրության մեջ (տե՛ս **Benveniste E.**, La mutation consonantique et les dialects modernes, BSLP, I, 1959, էջ 53):

61 Տե՛ս **Ղարիբյան Ա. Ս.**, Հայ բարբառագիտական հետազոտությունների հիմնական արդյունքները Սովե-

ցին հին հայերենին: Մինչ այդ նման կարծիք էին հայտնել Հ. Պեղերսընը⁶², Ա. Մեյեն⁶³ և Վ. Ալենը⁶⁴: Այդ տեսակետի ընդհանուր ճանաչում գտնելու դեպքում հին հայերենը կլիներ շնչեղ ձայնեղների կարգ տարբերակող հ.-ե. երկրորդ լեզուն՝ հին հնդկերենի հետ միասին: Սակայն հին հայերենում շնչեղ ձայնեղների հնչույթային կարգի տարբերակման հարցը հանդիպեց ինչպես հայ, այնպես էլ օտար մի շարք հայերենագետների առարկությանը⁶⁵ և, ըստ էության, մնաց բաց, եթե չասենք՝ մերժվեց: Ավելի ուշ Գ. Ջահուկյանը ենթադրություն արեց «համահայկական փուլում որոշ դիրքերում և հայոց լեզվի որոշ բարբառներում ոչ հնչույթային շնչեղությամբ ձայնեղների առկայության»⁶⁶ մասին: Եթե հին հայերենում շնչեղ ձայնեղ հնչույթների գոյությունն ընդունելու դեպքում, մի կողմից, կմեծանար հ.-ե.-ում նմանօրինակ կարգ վերականգնելու հավանականությունը, ապա, մյուս կողմից, ավանդական հայերենագիտությունը, ինչու ոչ՝ առհասարակ ավանդական հնդեվրոպաբանությունը, որի սկզբունքներին մինչ այդ հետևում էր նշանավոր հայերենագետների մեծ մասը՝ Հ. Հյուբշմանից սկսած, կկանգներ այնպիսի հիմնարար սկզբունք վերանայելու խնդրի առջև, ինչպիսին էր հայերենի բաղաձայնական տեղաշարժ(եր)ի դրույթը: Իհարկե, «կատկայինների տեսությունն» ընդունելու դեպքում այդպիսի խնդիրներ չեն ծագում, որովհետև այդ տեսությունը տեղաշարժի հասկացությունն ընդհանրապես վերաձևակերպում է: Այն է՝ հայերենի, գերմանական, խեթալուվիական և թոխարական լեզուների հպականների համակարգերը, որոնց հ.-ե. նախալեզվի համեմատությամբ վերագրվում էր տեղաշարժի երևույթը, ընդհակառակն, համարվում են հ.-ե. հպականների համակարգի հարազատ արտացոլումները⁶⁷: Ինչ վերաբերում է շնչեղ ձայնեղների հնչույթային կարգին հին հնդկերենում, պիտի նկատի ունենալ հետևյալը: – 1) Դրավիդյան մալայալամ, կաննադա և տելուգու լեզուներում շնչեղ ձայնեղների և խուլերի առկայության մասին կարելի է դատել ըստ համապատասխան գրերի տառադարձության՝ [ka]–[kha], [ga]–[gha], [ca]–[cha], [ja]–[jha], [ta]–[tha], [da]–[dha], [pa]–[pha] տիպի գույգերում [k]–[kh]–ը, [g]–[gh]–ը և մյուսները հնչույթային հակադրություններ համարելու դեպքում⁶⁸: 2) Դրավիդյան լեզուներից սանսկրիտին անցած բառային փոխառություններն ունեն շնչեղ խուլ և շնչեղ ձայնեղ

տական Հայաստանում, «Ատամարանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), 1958, N 1, էջ 18–39, նույնի՝ Հայ բարբառների ծագման հարցի շուրջը, ՊԲՀ, N 3, 1958, էջ 240–266, **Гарибян А. С.**, Об армянском консонантизме, ВЯ, 1959, N 5, էջ 81–90, **Гарибян А. С.**, Еще раз об армянском консонантизме, ВЯ, 1962, N 2, էջ 18–23:
 62 Տես **Պեղերսըն Հուգեր**, Հայերէն և դրացի լեզուները, Վիեննա, 1907, էջ 8: Հմմտ. նաև «... ըստ ինքեան զարմանալի չէ, որ հնդկը. gh կամ gh մը հայերէնի մէջ տակալին իբր gh մնացած ըլլայ ... » (նույն տեղում, էջ 11): Սակայն 1951-ին հրատարակված «Ընդհանուրհնդեվրոպական և նախահնդեվրոպական հպական հնչյունները» (“Die gemeinidoeuropäischen und die vorindoeuropäischen Verschlusslaute”) աշխատության մեջ Հ. Պեղերսընը հրաժարվում է այդ տեսակետից (տես **Семереньи О.**, Введение ... , էջ 159):
 63 Տես **Meillet A.**, Les dialectes indo-européens, Paris, 1950, էջ 13:
 64 Տես **Allen W. S.**, Phonetics and comparative linguistics, Archivum Linguisticum, 1951, N 3, էջ 134:
 65 Տես **Աճառյան Հ.**, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Եր., 1953, էջ 362–439, **Աղայան Է. Բ.**, Նոր հայերեն բարբառների առաջացման հարցի մասին, ՊԲՀ, 1958, N 1, էջ 211–233, **Ագայն Յ. Բ.**, О генезисе армянского консонантизма, ВЯ, 1960, N 4, էջ 37–52, **Գուգեն Սևակ**, Հայ բարբառների ծագման հարցի շուրջը, ՊԲՀ, 1959, N1 (4), էջ 224–245, **Ջահուկյան Գ. Բ.**, Հայ բարբառագիտությունը և հայերենի բարբառների ծագման հարցը, ՊԲՀ, 1959, N 2, էջ 282–319, **Джаукян Г. Б.**, К вопросу о происхождении консонантизма армянских диалектов, ВЯ, 1960, N 6, էջ 39–49, **Заброцкий Л.**, Замечания о развитии армянского консонантизма, ВЯ, 1961, N 5, էջ 43, **Фейди Ф.**, Заметки по армянскому консонантизму, ВЯ, 1961, N 5, էջ 46–49:
 66 **Джаукян Г. Б.**, Очерки ... , с. 76:
 67 Տես **Гамкрелидзе Т. В., Иванов Вяч. Вс.**, Индоевропейский язык ... , էջ 35–80 :
 68 Տես **Андронов М. С.**, Дравидийские языки, «Языки Азии и Африки», т. II, М., 1978, էջ 341–342:

հնչույթներ, որոնց համարժեքները փոխատու լեզուներում զուրկ են շնչեղության հատկանիշից (հմմտ. սնսկ. սն *khalā*- «սանդ» – թամ. *ulakkai* «սանդաթակիկ (սանդի մեջ)», սալ. *ulakka*, կան. *olake*՝ նույնը, տել. *rōkali* «փայտե մեծ սանդաթակիկ»,– սնսկ. *ghuṇa*- «փայտի որդ» – կան. *gōṇe* (-*puṇu*)՝ նույնը,– սնսկ. *ghūka*- «բու» – թամ. *kūkai*, կա. *gūgi*, *gūge*, *gūbi*, տել. *gūbi*, *gūba* «բու» են)⁶⁹, որից կարելի է ենթադրել, որ համապատասխան հնչույթները շնչեղության հատկանիշը ձեռք են բերել հին հնդկերենում: Հետևաբար, հին հնդկերենում շնչեղ ձայնեղների առկայությունը տարածաշրջանի լեզուների ազդեցությամբ բացատրելու է. Պռոկոշի պնդումն առնվազն միանշանակ չէ, եթե չասենք, որ հակասում է լեզվական փաստերին:

Ըստ Վ. Պորցիգի՝ հին հնդկերենից բացի նախապատմական փուլում ձայնեղ–շնչեղ ձայնեղ հնչույթաբանական⁷⁰ հակադրություն եղել է նաև հայերենում, հունարենում, լատիներենում, օսկ–ուրբոյան լեզուներում, վենետերենում և գերմաներենում: Ընդ որում, նշված լեզուներից հայերենը և հունարենը նա հատկացնում է հ.–ե. լեզուների արևելյան, իսկ մյուսները՝ արևմտյան հատվածին: Հետևաբար, հ.–ե. լեզուների բաժանումը վերոհիշյալ հատկանիշով ոչ միայն կապ չունի դրանք *centum* (արևմտյան) և *satəm* (արևելյան) խմբերի բաժանման հետ⁷¹, այլև նպատակ ունի ցույց տալու, որ շնչեղ–ոչ շնչեղ ձայնեղների հակադրությունը եղել է ընդհանուր հնդեվրոպական իրողություն: Այդպիսի եզրահանգման համար Վ. Պորցիգին հիմք են տալիս, մասնավորապես, հետևյալ հանգամանքները. 1) հույները *Φεῖγες* անվան հետ ծանոթ են եղել, երբ այն դեռևս սկսվել է *bh*-ով, «այն դեպքում, երբ նույն ցեղային անվանումը Թրակիայում Հերոդոտոսին հայտնի էր *Βοίγες* կամ *Βοῦγοι*» տարբերակներով, 2) գերմ. *kw* – հն հնդկ. *g* – կելտ. *b*, հն հնդկ. *gh* – հուն. *θ* – գերմ. *w* – կելտ. *g* տիպի համապատասխանությունները, որոնցից հետևում է, որ «դեռևս նախակելտերենում տարբերակվել են *g^u*-ը և *g^h*-ը»⁷²), 3) իրանական լեզուներում այդպիսի հակադրության երբեմնի գոյության մասին ենթադրելու հիմք են տալիս «սկզբնային խուլով ածանցի՝ արմատին միանալու» պայմանները. մասնավորապես, «մաքուր ձայնեղ հպականով» ավարտվող հնդկական արմատի «հնչյունաբանական զարգացման արդյունքները» տարբեր են այն դեպքերից, երբ այդպիսի ածանցը միանում է արմատի, որին հնդկերենում համապատասխանում է շնչեղ ձայնեղ (հմմտ. հն հնդկ. *yukta*– ավեստա *yuxta*, բայց՝ հն հնդկ. *dug-dha*– ավեստա *duγda*), 4) թեպետև մակեդոներենը, ալբաներենը, սլավոնական և բալթյան լեզուները ձայնեղ–շնչեղ ձայնեղ հակադրությունը չեն պահպանել, բայց նրանցից մակեդոներենը չէր կարող վաղ շրջանում դա չունենալ, որովհետև հունարենի մերձավոր ցեղակիցն էր, իսկ մյուս երեք լեզուներում դրա հետքերը չեն պահպանվել, որովհետև վկայված են ուշ

69 Տե՛ս **Барроу Т.**, նշվ. աշխ., էջ 354–360:

70 Վ. Պորցիգը **հնչույթաբանություն, հնչույթ** տերմինները չի գործածում, բայց հասկանալի է, որ խոսքը հենց այդպիսի հակադրության մասին է:

71 Ըստ *centum-satəm* դասակարգման՝ հունարենը, իտալական և թրակիական լեզուները համարվում են արևմտյան (*centum*) լեզուներ, սակայն Վ. Պորցիգի դասակարգմամբ, որի հիմքում, ի տարբերություն *centum-satəm* տարբերակման, ոչ թե հետնալեզվային բաղաձայնների քննադատումն է, այլ ուրիշ հատկանիշներ, դրանք հայտնվել են արևելյան (*satəm*) խմբում: Հունարենի և *satəm* խմբի լեզուների, մասնավորապես սանսկրիտի և հայերենի միջև «սերտ կապերի» դրույթը պաշտպանել է նաև Թ. Բարրոն (տե՛ս **Барроу,** նշվ. աշխ., էջ 19–20):

72 **Порциг В.**, Членение индоевропейской языковой области, М., 1964, с. 106:

ժամանակների գրավոր հուշարձաններով⁷³: Ըստ այդմ՝ Վ. Պորցիգը եզրակացնում է, որ «...ինչ-որ ժամանակ բոլոր հնդեվրոպական լեզուներում ձայնեղ հպականների և շնչեղ ձայնեղ հպականների շարքերը (ряды) տարբերվել են միմյանցից»⁷⁴: Վ. Պորցիգի փաստարկներից արժեքավոր են հատկապես առաջին երեքը, որոնք հիմնված են որոշակի լեզվական նյութի վրա:

Ընդունելով, որ հ.-ե. բարբառային տարածքների բաժանման Վ. Պորցիգի հայեցակարգի հիմքում առավելապես բառապաշարային նյութն է, այնինչ նման դեպքերում նախընտրելի են համարվում հնչույթաբանական և քերականական տվյալները, Ա. Դեսնիցկայան, այնուամենայնիվ, խոստովանում է նրա «եզրահանգումների ապացուցողական ուժը», որովհետև դրանք կառուցված են փաստական հարուստ նյութի վրա⁷⁵, իսկ ըստ Վ. Իվանովի՝ նրա գրքում «շարադրվում են հնդեվրոպական լեզուների առնչությունների մասին խնամքով ստուգված տվյալներ՝ դրանց գրավոր պատմությանը նախորդող փուլում»⁷⁶: Թեպետև մեզ հետաքրքրող հարցը նրանք քննության նյութ չեն դարձնում, բայց դա էլ կարող է դիտվել որպես անուղղակի վկայություն, որ ամբողջ աշխատությանը տրված գնահատականներն ընդհանուր առմամբ վերաբերում են նաև այդ խնդրին:

Ընդհանուր հնդեվրոպականում շնչեղ ձայնեղների կարգի առկայության/ (բացակայության) հարցի գնահատման առումով, նշվածներից բացի կարևոր է նաև **Գրասմանի** (1863) և **Բարթոլոմեի** (1882/1885)⁷⁷ **օրենքների**, ինչպես նաև կոկորդայինների հնչույթային էության հարցերի քննությունը:

Լեդինակային ըմբռնման համաձայն՝ վերոհիշյալ հնչյունական օրենքներն ունեն մասնակի բնույթ՝ վերաբերում են մեկ կամ մի քանի լեզվաճյուղի, բայց ավելի ուշ եղան այդ օրենքներն ընդհանուր հնդեվրոպական դարաշրջանին վերագրող մեկնաբանություններ: Գրասմանի օրենքը սահմանում է շնչեղների տարնմանության սկզբունքը հին հնդկերենում և հին հունարենում: Ըստ այդմ՝ երկու շնչեղացած հնչյուններ պարունակող հաջորդականության մեջ դրանցից առաջինը երկրորդի տարնմանական ազդեցությամբ զրկվում է շնչեղության հատկանիշից⁷⁸ (հմմտ. *dhā- «դնել, տեղավորել» - հն հնդկ. dádhāti (<*dhádhati) «դնում է, տեղավորում է», հուն. τιθησι (<*θιθησι)): Թ. Գամկրելիձեն և Վյաչ. Իվանովը այդ երևույթը վերամեկնաբանում են որպես հնդեվրոպական նախալեզվում տարնմանությամբ ապաշնչեղացման գործընթաց տարբեր հնչույթների այլահնչակների միջև (հմմտ. «... մեկ հիմքում թույլատրվում է միայն մեկ շնչեղ հնչյուն: Եթե սկզբնական հնչույթը ներկայացված է ոչ շնչեղ այլահնչակի տեսքով, ապա հաջորդող հնչույթը ներկայացված է շնչեղի տեսքով, և ընդհակառակը, շնչեղ սկզբնային այլահնչակի դեպքում հաջորդող հպականը ներկայացված է իր ոչ շնչեղ

73 Տե՛ս **Порциг В.**, նույն տեղում:
 74 Նույն տեղում, էջ 107:
 75 Տե՛ս **Десницкая А.**, Проблема диалектного членения индоевропейской языковой общности и исследование В. Порцига, **Порциг В.**, նշվ. աշխ., էջ 14-15:
 76 **Иванов Вяч. Вс.**, Новая литература о диалектном членении общеиндоевропейского языка, ВЯ, 1956, N 1, с. 121:
 77 Համեմատաբանական գրականության մեջ նշվում է այդ օրենքի հայտնագործության երկու թվական՝ 1882 (տե՛ս **Майрхофер М.**, նշվ. աշխ., էջ 142) և 1885 (տե՛ս **Широков О. С.**, Бартоломе закон, Лингвистический энциклопедический словарь (այսուհետև՝ ЛЭС), М., 1990, էջ 70), **Семереньи О.**, Введение ... , էջ 362:
 78 Տե՛ս **Семереньи О.**, Введение ... , էջ 68, **Широков О. С.**, Грасмана закон, ЛЭС, էջ 117:

այլահնչակի ձևով»⁷⁹): Ընդ որում, հիմնական այլահնչակը շնչեղացած տարբերակն է, որովհետև «այն դրսևորվում է հնչյունաբանորեն անկախ դիրքերի մեծ մասում»⁸⁰: Հին հնդկերենում և հին հունարենում ապաշնչեղացման գործընթացների ընդհանրությունը «պիտի դիտարկել որպես այդ հնչույթների բաշխման ընդհանուր օրինաչափության արտացոլում հնդեվրոպական նախալեզվի որոշակի տարածքում»⁸¹: Այսինքն, հին հնդկերենում և հին հունարենում Գրասմանի օրենքը զարգացել է մեկը մյուսից անկախ, որովհետև առաջին դեպքում ապաշնչեղացել են ձայնեղ, երկրորդում՝ խուլ բաղաձայնները: Իսկ այդ գործընթացների ընդհանրությունը երկու լեզուներում դեռևս հնդեվրոպական դարաշրջանից սկիզբ առնող ընդհանուր միտումների հետևանք է: Ըստ այդմ, «կատկայիների տեսությունը», ի դեմս Գամկրելի լիձեի և Իվանովի տարբերակի, հին հնդկ. bódhati «արթնացնում է», bódhate «արթնանում է», հուն. *θεύδομαι* «ձանաչում եմ», «նկատում եմ», *συνδύνομαι* «արթուն եմ մտում» ձևերի համար դասական հնդեվրոպաբանության մեջ վերականգնվող [*b^heud^h-] նախաձևի փոխարեն հ.-ե.-ում հավասարապես հնարավոր է համարում [*beud^h-] / [*b^heud-] տարբերակների վերականգնումը⁸²:

Սակայն Մ. Մայրիոֆերի կարծիքով համոզիչ չէ, որ «միևնույն լեզվաբանական համակարգի (հ.-ե.-հուն./հնդիրան.) երկու հարևան բարբառներում միաժամանակ գործող միասնական կանոնի կանխադրումը «ավելի խնայողական վարկած» կլիներ»⁸³: Ի տարբերություն Գրասմանի օրենքն ընդհանուր հնդեվրոպական դարաշրջանին (Գամկրելիձե-Իվանով) կամ «մինչպատմական ընդհանրությանը» (Պոլ Կիպարսկի) վերագրող վարկածների, Մ. Մայրիոֆերն այդ օրենքի ոչ ընդհանուր հնդեվրոպական բնույթն ապացուցող որոշիչ փաստ է համարում այն, որ «հունական արձանագրություններում ամրագրված են T^h ...T^h հաջորդականությունը պահպանող ձևերի օրինակներ» (հմմտ., օր., *θυφλός* (= *τυφλός* “կույր”), *ἐθέθην* (= *ἐτέθην* “դրվեց”) ևն)⁸⁴: Նրա կարծիքով՝ Գրասմանի օրենքի գործունեությունը վերաբերում է հունարենի անկախ պատմության շրջանին և «ծագումնաբանորեն կապված չէ հին հնդարիականում նման կանոնի գործունեության հետ»։ Երկու լեզուների համար ընդհանուր է շնչեղ բաղաձայնների առկայությունը, որի պատճառով էլ «հակվածություն են դրսևորել դեպի բնական տարնմանական գործընթացը»⁸⁵:

Բարթոլոմեի օրենքն ընդհանուր առմամբ ներկայացվում է ըստ հին (վեդայական) հնդկերենի նյութի: Այն ձևակերպվել է որպես ընդհանուրարիական (= հնդիրանական) պարզ խուլերի՝ նախորդող շնչեղ ձայնեղներին առնմանության օրենք, ըստ որի՝ հ.-ե. b^h+t, b^h+k, d^h+k, d^h+p, g^h+p և այլ տիպի կապակցությունները հին հնդկերենում վերածվել են, համապատասխանաբար, bdh, bgh, dgh, gbh, gdh և այլ տիպի կապակցությունների (հմմտ. հին հնդկ. buddhá «ձանաչված, նկատված» (<*budh-tá-), dagdhá- «այրված»

79 Гамкредидзе Т. В., Иванов Вяч. Вс., նշվ. աշխ., էջ 22:

80 Նույն տեղում, էջ 21:

81 Նույն տեղում, էջ 23:

82 Տե՛ս նույն տեղում, էջ 21-24: Հմմտ. նաև՝ Майрхофер М., նշվ. աշխ., էջ 140-141:

83 Майрхофер М., նշվ. աշխ., էջ 140:

84 Տե՛ս Майрхофер М., նշվ. աշխ., էջ 142:

85 Նույն տեղում:

(<*dagh-tá-) ևն)⁸⁶: Ըստ այդմ, հնդիրանականում վերոհիշյալ տիպի հնչյունական հաջորդականություններում տեղի են ունենում հնչյութաբանական երկու կարգի փոփոխություններ՝ ա) շնչելության հատկանիշի անցում երկրորդ բաղադրիչին, բ) երկրորդ խուլ բաղադրիչի ձայնեղացում: Այդ օրենքը գործել է նաև ավեստայում (հմմտ. ավես. aoxta <հն ավես. aogəda (<augdā) «նա ասաց» (<*augh-ta), սնսկ. duhitar- «աղջիկ» - ավես. dugədar (<dugdar- <*dugh-tar-)): Բարթոլոմեի օրենքի դրսևորման առանձին դեպքեր նկատվել են նաև լատիներենում, հունարենում, գերմանական և կելտական լեզուներում⁸⁷: Խեթերենում այդ օրենքի գործունեության «հնարավոր հետքեր» ցույց է տվել է Օ. Սեմերենյին⁸⁸: Նշված իրողությունները Ե. Կուրիլովիչին, Թ. Գամկրելիձեին, Վյաչ. Իվանովին և ուրիշների հիմք են տվել Բարթոլոմեի օրենքը վերագրելու ընդհանուրհնդեվրոպական դարաշրջանին: Ե. Կուրիլովիչը նման տեսակետ է հայտնել ելնելով այն դրույթից, որ նախքան հնդիրանական լեզուներում Բարթոլոմեի օրենքի գործունեությունը, «լեզուների այդ խմբում գոյություն չեն ունեցել ph, th, kh շնչել խուլեր»⁸⁹: Նրա կարծիքով, bh+t>bdh տիպի անցումը նշանակում է, որ Բարթոլոմեի օրենքի գործունեության ընթացքում bh, gh, dh-ը հնչյութաբանորեն ձայնեղներ չէին, ուստի «չէին կարող ունենալ համապատասխան խուլ լծորդներ»⁹⁰: Ըստ Ե. Կուրիլովիչի՝ «եթե ph : bh, th : dh, kh : gh հակադրությունը գոյություն ունենար» նախքան Բարթոլոմեի օրենքի գործունեությունը, ապա «bh+t առնմանության արդյունքը կլիներ ... (*phth)>pth»⁹¹: Որովհետև շնչել ձայնեղները չէին կարող լծորդային հակադրություն ձևավորել *ph, *th, *kh-ի հետ, դրանից հետևում է, որ հնդեվրոպական նախալեզուն չէր կարող ունենալ շնչել խուլերի հնչյութային կարգը⁹²: Ըստ էության, այդ եզրահանգումով Ե. Կուրիլովիչը պաշտպանում է Ֆ. դը Սոսյուրի տեսակետը h.-ե.-ում շնչել խուլերի հնչյութային կարգը մերժելու մասին:

Բարթոլոմեի օրենքը որպես «II և III կարգի հպականների շնչել և ոչ շնչել այլահնչակների բաշխման ընդհանուրհնդեվրոպական օրինաչափության դրսևորում» վերամեկնաբանելու համար Գամկրելիձեին և Իվանովին հիմք են տվել, հնդիրանականից բացի, այդ օրենքի դրսևորումները փնտրել հին հունարենում և լատիներենում (հմմտ. *leg-t^hos- > հուն. λέξ-τε-ον «մա-հիձ, անկողին», լատ. lectus «մահիձ, անկողին», *fig-t^hos > fictus «կերտված, ձևավորված», fingō «կերտում եմ» ևն)⁹³: Ըստ Գամկրելիձեի և Իվանովի՝ Բարթոլոմեի օրենքը գործում է 1) երկու ձևայինների կցման տեղում, որովհետև «արմատի սահմաններում այդպիսի հաջորդականությունը բացառվում է»⁹⁴, 2) ի տարբերություն հին հնդկերենի, ուր տեղի է ունենում հաջորդող

86 Shtu Семереньи О., նշվ. աշխ., էջ 116-117, Майрхофер М., նշվ. աշխ., էջ 142, Широков О. С., Бартоломе закон, ЛЭС, М., 1990, էջ 70, К. Г. Красухин, նշվ. աշխ., էջ 60:

87 Shtu Майрхофер М., նշվ. աշխ., էջ 143:

88 Shtu Семереньи О., նույն տեղում:

89 Курилович Е., О методах внутренней реконструкции, НЛ, вып. IV, М., 1965, с. 406.

90 Курилович Е., նշվ. աշխ., էջ 406: Հմմտ. նաև՝ «h.-ե.-ում նրանց հակադրված չէին <T^h> տիպի նախա-սկզբնական հնչյութներ» (Майрхофер М., նշվ. աշխ., էջ 143):

91 Курилович Е., նույն տեղում:

92 Shtu Курилович Е., նշվ. աշխ., էջ 406-407:

93 Shtu Гамкрелидзе Т. В., Иванов Вяч. Вс., Индоевропейский язык ... , էջ 33:

94 Гамкрелидзе Т. В., Иванов Вяч. Вс., նշվ. աշխ., էջ 34: - Այդ առնչությամբ տես նրանց ձևակերպած 4-րդ կանոնը, ըստ որի՝ «Մեկ արմատի կազմում չկատկայնացած հպականները պիտի բնութագրվեն ձայնեղության-խուլության հատկանիշի միատեսակ արժեքայնությամբ» (նույն տեղում, էջ 20):

բաղաձայնի առնմանություն ձայնեղության հնչույթաբանական հատկանիշով և շնչեղության հատկանիշի փոխանցում հաջորդող բաղաձայնին, ապա հունարենում և լատիներենում տեղի է ունենում առնմանություն խլության հնչույթաբանական հատկանիշով և շնչեղության հատկանիշի կորուստ: Նշված իրողությունների քննության հիման վրա նրանք եզրակացրել են, որ Բարթոլոմեի օրենքով նկարագրվող առնմանական փոփոխությունները հին հնդկերենում և դրանց զուգահեռները հին հունարենում ու լատիներենում «կարող են բերվել հնդեվրոպական լեզվի հնչույթաբանական օրինաչափությունների ընդհանուր սկզբունքի տակ»⁹⁵:

Անշուշտ, սխալ կլինի տիպաբանական տվյալների անտեսումը նախալեզվական համակարգերը վերականգնելիս, բայց և այնպես, պիտի ձեռնպահ մնալ դրանց նշանակության գերազնահատումից, որովհետև եթե գիտությանը դեռևս հայտնի չեն այս կամ այն տիպի հնչույթային համակարգ ունեցող լեզուներ, դա դեռևս չի նշանակում, թե այդպիսիք առհասարակ չեն եղել կամ չեն կարող լինել⁹⁶: Ռ. Յակոբսոնի սահմանած վերոհիշյալ տիպաբանական օրինաչափությունը, ի վերջո, ձևակերպվել է սահմանափակ թվով լեզուների տվյալների հաշվառումով, և որքան էլ ձիշտ սկզբունքով ընտրված լինեն լեզուները, միննույն է, այդ ընտրությունը չի կարող երաշխավորել, որ չեն լինի բացառություններ: Այսպես, Զ. Գրինբերգը, որի վաստակը մեծ է ինչպես լեզվական ընդհանրությունների, այնպես էլ տիպաբանական օրինաչափությունների սահմանման գործում, «Մի քանի ընդհանրացումներ, որոնք վերաբերում են բաղաձայնների հնարավոր սկզբնային և վերջնային հաջորդականություններին» հողվածում 41 հնչույթաբանական ընդհանրություններ է սահմանում աշխարհի շուրջ 2600 լեզուներից միայն 104-ի տվյալների հաշվառումով⁹⁷: Հետևաբար, այդ ընդհանրությունները չեն կարող համապարփակ լինել, որովհետև չեն սպառում բոլոր հնարավորությունները: Բայց, որ ամենից կարևորն է, «ոչ մի ուսումնասիրող ի վիճակի չէ անձամբ ստուգել երկրորդ ձեռքից ստացվող նյութը, և արդյունքում հաճախ համադրվում են անհամադրելի նկարագրություններ »⁹⁸: Դրանով հանդերձ, ըստ Վ. Մարտինովի, Ռ. Յակոբսոնի կողմից «փորձով հաստատված օրինաչափության հիմքում իսկական ընդհանրույթ է գտնվում»⁹⁹, որովհետև որևէ հատկանիշով օժտված կարգի առկայությունը ենթադրում է այդ հատկանիշից զուրկ կարգի առկայություն (հմտ. «Գոյություն չունեն նշույթավորված հնչույթների (լրացուցիչ տարբերակիչ բաղադրիչներով հնչույթների) շարքի առկայությամբ լեզուներ՝ համապատասխան չնշույթավորվածների (առանց լրացուցիչ տարբերակիչ բաղադրիչների) շարքի բացակայության դեպքում»¹⁰⁰): Պիտի նկատել, որ Վ. Մարտինեի գնահատականը խիստ տեսական է և արդարացված տրամաբանական մակարդակում, բայց նրա հիմքում ոչ թե լեզվական փաստ/(եր) է/(են), այլ գիտական որոշակի կանխադրույթ, որի փոխվելու դեպքում կփոխվի նաև այդ ընդհանրույթի

95 Гамкредидзе Т. В., Иванов Вяч. Вс., նշվ. աշխ., էջ 33-34:

96 Տե՛ս **Майрхофер М.**, նշվ. աշխ., էջ 145, **Одри Ж.**, Типология и реконструкция, НЗЛ, вып. XXI, М., 1988, էջ 190:

97 Տե՛ս **Гринберг Дж.**, Некоторые обобщения, касающиеся возможных начальных и конечных последовательностей согласных, ВЯ, 1964, N 4, էջ 41- 65:

98 **Мартинов В. В.**, Славянская и индоевропейская аккомодация, Минск, 1968, с. 7.

99 Նույն տեղում, էջ 8:

100 Նույն տեղում, էջ 9:

մասին պատկերացումը: Մասնավորապես հնչոյթաբանական հայեցակերպում ձայնեղությունը տարբերակվում է խլության հետ հակադրության հիման վրա (հմմտ. **բ-պ** (b-p) հակադրությունը հայերենում. **բար** «պտուղ» – **պար** «պարելը»), իսկ հնչյունաբանական հայեցակերպում ձայնեղության՝ որպես տվյալ հնչյունի ձայնաբանական բնութագրի առկայության համար խլության հատկանիշով լծորդություն կազմելը էական չէ:

Ինչ վերաբերում է Ռ. Յակոբսոնի առաջարկած ընդհանրության, այն վիճարկել է Ռոբերտ Ա. Բլաստը «Կրկնակի հակաընդհանրությո կելաբիտում» աշխատության մեջ: Հիմք ընդունելով բարիտ ավստրիոնեգերեն լեզվի կելաբիտ բարբառում «հպական հնչոյթների երեք շարքի» (հատկապես՝ **խուլ-ձայնեղ-շնչեղ ձայնեղ** հակադրությամբ (/p/, /t/, /k/, /b/, /d/, /g/, /b^h/, /d^h/, /g^h/)) տարբերակման փաստը՝ Ռ. Բլաստը նկատել է, որ «... առկա է բացառություն Յակոբսոնի առաջարկած ներակայական հնչոյթաբանական ընդհանրությանը»¹⁰¹: Ավելի վաղ կելաբիտ լեզվի նշված կիսաձայնների «կառուցվածքային զուգահեռներ» ցույց էր տվել Ե. Պուլիվանովը հյուսիս-չինական բարբառներում¹⁰²: Եթե նույնիսկ, հետևելով Թ. Գամկրելիձեին և Վ. Իվանովին՝ վիճելի համարենք կելաբիտում Ռ. Բլաստի կողմից իբրև շնչեղ ձայնեղ որակված հնչոյթների բովանդակության (իմա՝ հնչոյթաբանական հատկանիշների) հարցը՝ դրանք համարելով կիսաձայններ՝ «[b], [d], [g] և [-bp-], [-dt-], [-gk-] համակցային տարբերակներով՝ շեշտված ձայնավորից հետո դիրքում»¹⁰³, միննույն է, ինչպես որ այդօրինակ բացառություններից չի նվազում Ռ. Յակոբսոնի կողմից ձևակերպված տիպաբանական ընդհանրության նշանակությունը լեզվաբանության համար, այնպես էլ չի կարող բացառվել հնդեվրոպականում հպականների /t/-/d/-/d^h/ տիպի հնչոյթային հակադրությունը: Մասնավանդ որ հիմնահարցի ծագումնաբանական քննությունն այդ առումով որոշակի հիմքեր ներկայացնում է:

4. Հ.-ե. շնչեղ խուլերի և կոկորդայինների հարցը

Ինչ վերաբերում է հին («դասական») հունարենի φ , θ , χ խուլերին շնչեղության հատկանիշ վերագրելուն, ապա «հոգուտ հաստատված կարծիքի փաստարկները բավականին ծանրակշիռ են», բայցևայնպես այդ հարցում նույնպես լիակատար պարզություն չկա¹⁰⁴: Է. Մեայիրի վկայությամբ, եթե ինչ-որ պատճառով «p-ն փոխարինվում է իր համապատասխան ձայնեղ b-ով, ապա նախկին p, t, k շարքը հանդես է գալիս արդեն անհամաչափ b, t, k ձևով»¹⁰⁵: Դա հանգեցնում է ընդհանուր հնչյունաբանական համակարգի խախտման: Եվ եթե t-ն ու k-ն նույնպես անցնում են իրենց համա-

101 Майрхофер М., նշվ. աշխ., էջ 145-146 (հմմտ. Blust R. A., A double counter-universal in Kelabit, "Working Papers in Linguistics". Department of Linguistics, University of Hawaii, v. 5, N 6, 1973, 49-55):

102 Стів Поливанов Е. Д., Субъективный характер воспритый звуков языка, նույնի՝ Статьи по общему языкознанию, М., 1968, էջ 250-251:

103 Հմմտ. «... պիտի խոսել ոչ թե հպականների ձայնեղ շարքի հնչոյթաբանական շնչեղության մասին, այլ նրանց հնչոյթաբանական կիսաձայնության մասին և, համապատասխանաբար, մաքուր ձայնեղների համեմատությամբ՝ ավելի մեծ լարվածության մասին, որը դրսևորվում է որոշակի դիրքերում -bp^h-, -dt^h-, -gk^h- հաջորդականության դեպքում (ցանկացած շեշտված ձայնավորից հետո) ...» (Гамкредидзе Т. В., Иванов Вяч. Вс., նշվ. աշխ., էջ 12):

104 Стів Прокош Э., Сравнительная грамматика ... , с. 29.

105 Сепир Эдвард, Язык. Введение в изучение речи, նույնի՝ Избранные труды по языкознанию и культурологии, М., 2002, с. 166:

պատասխան ձայնեղներին՝ d-ի և g-ի, ապա լեզվում նմանօրինակ, բայց այլ «պատմական ծագման» շարքի առկայության դեպքում վերջինը (այսինքն՝ նախկին շարքը) իր ամբողջականությունը կարող է պահպանել, եթե նրանում տեղի է ունենում որևէ հնչյունաբանական (=հնչյութաբանական) հատկանիշի փոփոխություն, ասենք՝ հնչյունները վերածվում են **շնչեղի** (bh, gh, dh), **շփականի** կամ **կողմնականի**: «Հնչյունների այդ կարգի փոփոխությունները, առանց հնչյունաբանական համակարգի խախտվելու կամ նրա նվազագույն խախտումով, ըստ էության, ամենակարևոր միտումն են խոսքի հնչյունների պատմության մեջ»¹⁰⁶: Հետևաբար, բացառված չէ, որ դասական հունարենում φ , θ , χ խուլերը եղել են շնչեղ¹⁰⁷: Ըստ Լ. Գերցենբերգի՝ «... հին հունարենի φ -ն նույնիսկ հելլենիստական դարաշրջանում է նշանակել / p^h / հնչյությամբ»¹⁰⁸: Հին հունարենում շնչեղ խուլերի կարգի առկայության մասին է վկայում Գրասմանի օրենքը (հմմտ. *b^heud^h- «արթուն լինել» > $\sigma\epsilon\upsilon\theta\omicron\rho\alpha\iota$ «իրազեկում եմ, տեղեկացնում եմ»): Հին հունարենի φ -ի շնչեղ բնույթը միանգամայն հնարավոր է նաև տիպաբանորեն, եթե նկատի առնենք, որ՝ 1) հին հունարենի հպականները եռակարգ հակադրություն են կազմել (հմմտ. β - σ - φ , δ - τ - θ , γ - κ - χ), 2) շրթնային խուլերի երկու կարգ՝ պարզ (պ/բ) և շնչեղ (փ/բ^h), տարբերակել է նաև հին հայերենը: Ըստ Է. Պոռոկոչի, մ. թ. սկզբում հին հունարենի խուլերը եղել են շփականներ¹⁰⁹, բայց դեռևս չի նշանակում, որ դրանք շփականներ են եղել նաև հունական բարբառը (= լեզուն)՝ հ.-ե. նախալեզվից անջատվելուց անմիջապես հետո: Ավելին, դրանք իրենց հպական բնույթը պահպանած պիտի լինեին երկար ժամանակ, հավանաբար՝ մինչև մեր թվագրությունը:

Ինչպես արդեն նշվել է, հ.-ե.-ում շնչեղ խուլ և շնչեղ ձայնեղ հպականները, Ֆ. դը Սոսյուրի ժամանակներից սկսած, ունանք համարել են «պարզ հպական + կոկորդային հնչյուն» հաջորդականության հետագա զարգացում¹¹⁰: Այդ կապակցությունները մեկ հնչյութի արժեք ձեռք են բերել հ.-ե. առանձին լեզուների (հին հնդկերեն, հին հայերեն, հին հունարեն) ինքնուրույն զարգացման պատմության ընթացքում: Վերը տեսանք, որ Ե. Կուրիլովիչը, Բարթոլոմեի օրենքի հիման վրա հ.-ե.-ում ենթադրելով մի դրություն, երբ շնչեղ ձայնեղների (MA) ձայնեղությունը չի եղել տարբերակիչ, այսինքն՝ հնչյութաբանական հատկանիշ, շնչեղ խուլերի առաջացումը վերագրել է հնդիրանական փուլին¹¹¹: Շնչեղ հպականների առաջացման այդպիսի մեկնությունը, որն ընդունել են ոչ բոլոր հնդեվրոպաբանները¹¹², ընդունելի կարող է լինել այն դեպքում, եթե հ.-ե. կոկորդայինի բնութագրական արտացոլումը (կամ առնվազն դրանցից մեկը)¹¹³ համարվի խեթերենի h-ի տիպի հնչյությամբ, որի հիման վրա Ե. Կուրիլովիչը փորձեց հիմնավորել հ.-ե.-ում «կոկորդային հնչյունների» (Հ. Սյուլերի բնորոշումն է) գոյության

106 Նույն տեղում:

107 Տե՛ս **Семереньи О.**, նշվ. աշխ., էջ 65-66, 158-161:

108 **Герценберг Л. Г.**, Краткое введение в индоевропейистику, Санкт-Петербург, 2010, с. 10.

109 Տե՛ս **Прокош Э.**, նշվ. աշխ., էջ 29:

110 Հմմտ. «Տիպաբանական բնույթի դատողությունները թույլ են տալիս մտածել, որ շնչեղների ձակատագիրը հին հնդեվրոպական լեզուներում կապված է եղել h տիպի հնչյութի առկայության հետ» (տե՛ս **Иванов В. В.**, Хеттский язык, էջ 86): Տե՛ս նաև՝ **Барроу Т.**, նշվ. աշխ., էջ 85:

111 Տե՛ս **Курилович Е.**, О методах ..., էջ 406: Հմմտ. նաև **Семереньи О.**, նշվ. աշխ., էջ 160:

112 Տե՛ս **Семереньи О.**, նշվ. աշխ., էջ 160:

113 Տե՛ս Сравнительная грамматика германских языков, т. II, М., 1962, էջ 15:

մասին Ֆ. դը Սոսյուրի վարկածը¹¹⁴: Հնչյունաբանական բնութագրի տեսանկյունից կոկորդային հնչյուններին վերագրվել են տարբեր արժեքներ՝ ձայնավորական (հ.-ե. **շվան**), ձայնորդական և բաղաձայնական, իսկ բաղաձայնականների մեջ տարբերակել են շփական (խեթերենի **h-ն**), հետնաքմային, շրթնայնացած և կատկային տեսակներ (վերջին երեքը տարբերակել է Ա. Մարտինեն): Օ. Սեմերենյին կոկորդային հնչյուն¹¹⁵ պարունակող հ.-ե. արմատների կառուցվածքային քննության հիման վրա եզրակացնում է, որ կոկորդայինը ձայնեղության հատկանիշով միջին դիրք է զբաղեցրել ձայնորդների և հպականների միջև և, ըստ ամենայնի, եղել է շփական¹¹⁶: Արտաբերության տեղով, ըստ Թ. Գամկրելիձեի և Վյաչ. Իվանովի, հ.-ե. կոկորդայինները եղել են «հավանաբար ավելի հետին կազմավորման, քան լեզվակայինները»¹¹⁷: Քանի որ ընդունված հնչյունաբանական դրույթի համաձայն՝ շփականները չեն կարող վանկարար գործառույթ իրականացնել, դա նշանակում է, որ «շվան, լինելով ձայնավոր, չի կարելի նույնացնել կոկորդայինի հետ»¹¹⁸: Այդ տեսակետը պաշտպանել է նաև Թ. Բարրուն. հմնտ. «... հնդեվրոպական թ-ի վարկածը չի արդարացվում ոչ կոկորդային, ոչ էլ որևէ այլ տեսության շրջանակներում: Հնդեվրոպական H-ը ունակ չէ ձայնավորի գործառույթի ...»¹¹⁹: Վյաչ. Իվանովը խեթերենի **h-ը** համարել է հետնալեզվային խուլ շփական¹²⁰: Խեթերենից բացի, հնդեվրոպաբանները կոկորդայինների արտացոլումներ ցույց են տվել նաև հին հունարենում (ըստ Վ. Գեորգիևի՝ «նախահունարենում (կամ նախահունական լեզուներից մեկում)»), հին հայերենում և ընդհանուրգերմաներենում¹²¹: Մասնավորապես, հին հայերենում բառակազմի դիրքում **h-ն** նախկին կոկորդայինի ռեֆլեքս է համարվում, եթե ցեղակից լեզուներում համարժեք բառը

114 Ֆ. դը Սոսյուրը դրանց տվել էր «ձայնորդական կալիֆիգիւնտներ» անվանումը (տես **Соссюр Фердинанд де**, Мемуар о первоначальной системе гласных в индоевропейских языках, նույնի Труды по языкознанию, М., 1977, էջ 310-311: Հմնտ. նաև՝ **Семереньи О.**, նշվ. աշխ., էջ 140-141):

115 Հ. Պեդերսոնի հետևողությամբ կոկորդային հնչյունը պայմանականորեն նշանակվում է H-ով, ըստ այդմ՝ կարող են լինել H₁, H₂, H₃ ... H_n թվով կոկորդայիններ: Հնչյունաբանական բնութագրերով պայմանավորված՝ կոկորդայինների թիվը տատանվել է 1-ից 10-ի միջակայքում: Հ.-ե.-ում 1 կոկորդայինի վարկածն ընդունել են դանիացի լեզվաբան Լ. Համերիխը և չեխ լեզվաբան Լ. Ջգոստան (տես **Савченко А. Н.**, Сравнительная грамматика индоевропейских языков, М., 1974, էջ 131): 1960-ականներին այդ տեսակետը պաշտպանել է նաև ռուս լեզվաբան Վյաչ. Իվանովը (**Иванов В. В.**, Проблема ларингальных в свете данных древних индоевропейских языков Малой Азии, ВМГУ, 1957, N 2), սակայն Թ. Գամկրելիձեի հետ հեղինակած իրենց հիմնարար ուսումնասիրության մեջ նրանք առաջնորդվել են 3 կոկորդայինի վարկածով (տես **Гамкрелидзе Т. В., Иванов Вяч. Вс.**, Индоевропейский язык ... , էջ 157-159): 2 կոկորդային հնչյուն են տարբերակել Հ. Պեդերսոնը և նրա աշակերտ Հ. Հենդրիկսենը: Հ.-ե. նախալեզվում 4 կոկորդային հնչյուն է տարբերակել Է. Սեպիրը (տես **Сепир Эдвард**, Глоттализированные проходные в навахо, нутка и квакиутле (с замечанием об индоевропейском), նույնի Избранные труды ... , էջ 349), իսկ նրա հետևողությամբ՝ առհասարակ ամերիկյան լեզվաբանության ներկայացուցիչները՝ Վ. Լեման, Է. Սոյուրտևանտ և ուրիշներ (տես, օր., **Sturtevant Edgar H.**, A comparative grammar of the Hitite language, Philadelphia, 1933, էջ 72): Հ.-ե.-ում 10 կոկորդային է ընդունել ֆրանսիացի լեզվաբան Ա. Մարտինեն (տես **Семереньи О.**, նշվ. աշխ., էջ 142): Առավել տարածված էր 3 կոկորդայինի վարկածը (Ե. Կուրիլովիչ, Է. Բենվենիստ, Վ. Կուվոյոր, Ն. Անդրեն և ուրիշներ):

116 Տես **Семереньи О.**, նշվ. աշխ., էջ 144:

117 **Гамкрелидзе Т. В., Иванов Вяч. Вс.**, նշվ. աշխ., էջ 157:

118 **Семереньи О.**, նշվ. աշխ., էջ 145:

119 **Барроу Т.**, նշվ. աշխ., էջ 86:

120 Տես **Иванов В. В.**, Хеттский язык, էջ 87: Ըստ Ե. Կուրիլովիչի՝ հ.-ե. երեք կոկորդայիններից խեթերենը պահպանել էր միայն երկուսը՝ H₂-ը և H₃-ը (տես **Семереньи О.**, նշվ. աշխ., էջ 140):

121 Տես Сравнительная грамматика германских языков, т. II, М., 1962, էջ 65: Ըստ Վ. Լեմանի («Նախահնդեվրոպական հնչյութաբանություն»/ «Proto-Indo-European phonology»), նախագերմանական w-ն «ցանկացած կարճ ձայնավորից հետո», իսկ j-ն՝ i-ից հետո «երկարացման են ենթարկվել այն դեպքում», եթե w-ն և j-ն ուղեկցվել են կոկորդայինի հնչյունի ռեֆլեքսով: A-ից հետո j-ն ենթարկվել է երկարացման, եթե կոկորդայինի ռեֆլեքսը սախորդել է j-ին կամ հաջորդել է նրան (նույն տեղում):

հանդիպում է առանց *h*-ի (հմմտ. հյ. հովի [hovi] «հովիվ» (<*hovipā) «ոչ-խարի հովիվ», հիեր. խեթ. haḫas «ոչխար», հն հնդկ. ávi-s «ոչխար», հուն. οἴς- «ոչխար», լատ. avis «ոչխար»,- հուն. հուն. ἰχθῶρ «արյուն» (<*ihhōr), խեթ. ešhar, išhar (<*ešhōr) «արյուն»),- հյ. հացի [hačil] «հացենի»-ալբ. ah, հուն. ὄξυη [oksyē] «հաճարենի», հն իսլոն. askr «հացենի, նիզակ», հն վրն. գերմ. asc «հացենի», - հյ. հալ [hav] «պապ» - լատ. avus «պապ, նախնի», խեթ. huḫhas «պապ» (*aḫo-s-ից «պապ») ևն)¹²²: Ինչպես երևում է նշված օրինակներից, հին հնդկերենը, լատիներենը, հին իսլանդերենը, երբեմն նաև հին հունարենը, հայերենի բառասկզբի *h*-ի դիմաց նախկին կոկորդայինի ռեֆլեքսը չունեն:

Կարծում ենք, որ վերոշարադրյալը հիմք է տալիս անելու հետևյալ եզրահանգումները:

1) Ընդհանուրինդեվրոպական լեզվում կատկային հպականների կարգ (*p̥, *t̥, *g̥, *ǵu) վերականգնելու փորձերի հիմքում այլհամակարգային (սեմական, քարթվելական, ամերիկահնդկացիական) լեզուների իրողություններն են, որոնք հնդեվրոպական նախալեզվին վերագրվել են տիպաբանական ընդհանրացումով: Հ.-ե.-ում կատկային հնչույթների կարգ վերականգնելու համար հիմք են եղել, թերևս, նոստրատիկ լեզվաբանության տվյալները, որոնց համաձայն ավելի վաղ ժամանակներում սեմական, քարթվելական և հնդեվրոպական նախալեզուները մաս են կազմել մի ընդհանուր լեզվական միության, որին տրվել է «նոստրատիկ լեզվամիություն» անվանումը: Հ.-ե. հին լեզուներից և ոչ մեկը չի ունեցել կատկայնացած հնչույթներ/(հնչյուններ), հետևաբար ընդհանուրինդեվրոպական լեզվին կատկայնացած հնչույթների կարգ վերագրելը հազիվ թե կարող է արժանահավատ համարվել:

2) Բառասկզբի դիրքում *b-ի հազվադեպ հանդիպելիությունը (նույնիսկ բացակայությունը) դեռևս չի նշանակում այդ հնչյունի, առավել ևս՝ ձայնեղ հպականների, բացակայություն հ.-ե. նախալեզվում, քանի որ *b-ն բավարար չափով ներկայացված է բառամիջում: Ընդհանուրինդեվրոպականում *b-ի գոյության մասին են վկայում նաև *bh>b, *b>p տիպի անցումները հ.-ե. հին լեզուների մեծ մասում:

3) Եթե նույնիսկ միանշանակ չէ Գրասմանի և Բարթոլոմեի օրենքների վերամեկնաբանությունը «կատկային տեսության» ներկայացուցիչների կողմից՝ որպես ընդհանուրինդեվրոպական իրողությունների, այնուամենայնիվ, պիտի ընդունել, որ այդպիսի մեկնաբանության համար ևս կան որոշակի նախադրյալներ: Ավանդական, թե՛ վերամեկնաբանված ըմբռնումով, այդ օրենքները վկայում են դեռևս ընդհանուրինդեվրոպական փուլում հպականների շնչեղության հատկանիշի մասին:

4) Հավանաբար պիտի ընդունել, որ շնչեղ հպականները համապատասխան ոչ շնչեղների և կոկորդային(ների) (խեթերենի *h*-ի տիպի) միացության արդյունք են, այն է՝ b+h>b^h, g+h>g^h, t+h>t^h և այլն՝ որպես որակական նոր իրողություններ, այսինքն՝ մեկ-միասնական հնչույթներ: Չնայած որ այդ տեսակետի ընդունումն առաջ է բերում նոր հարցեր, որոնց «կոկորդային

122 Shtu Георгиев В. И., Исследования по сравнительно-историческому языкознанию, М., 1958, էջ 13, Джаукян Г. Б., Очерки ..., էջ 238-248:

տեսությունն» առայսօր համոզիչ պատասխան չի տվել, բայցևայնպես, շնչեղ հպականների կազմավորման ավելի հավանական բացատրություն համեմատական լեզվաբանությունը դեռևս չի առաջարկել: Այդ հարցերից է, օրինակ, թե ինչո՞ւ խեթերենը, որը պահպանել է հ.-ե. կոկորդայինների որոշ ներկայացուցիչներ կամ առնվազն դրանց ռեֆլեքսները, չի ունեցել շնչեղ հպականներ: Խեթերենում *th* տիպի կապակցությունները եղել են խուլ հպականի և կոկորդայինի հաջորդականություններ (հմմտ. *tethai*- «գարկել (ամպրոպի մասին)»), այլ ոչ թե՛ շնչեղ խուլ հպական հնչույթներ¹²³:

5) Ըստ ամենայնի, հ.-ե. նախալեզվում, այդ թվում՝ նրա ընդհանուր-հնդեվրոպական փուլում, շնչեղությունը եղել է հնչյունաբանական հատկանիշ, բայց ոչ հնչույթաբանական: Այսինքն՝ չի ձևավորել իմաստատար-բերակիչ հակադրություն: Դա նշանակում է, որ ձայնեղների և խուլերի կարգերից յուրաքանչյուրը գործառել է պարզ և շնչեղ դիրքային տարբերակներով (=ենթահնչույթներով), այն է՝ **b/*b^h*, **d/*d^h*, **g/*g^h*, **p/*p^h*, **t/*t^h*, **k/*k^h*, որոնց հնչույթային համարժեքը կարող է նշանակվել, օրինակ, **B^(h)* ... **T^(h)* տիպերի խորհրդանշաններով:

6) Հ.-ե. հին լեզուների մեծ մասը տարբերակել է հպական բաղաձայնների երկու կարգ՝ **ձայնեղ** և **խուլ** կամ **շնչեղ խուլ**: Երեք կարգ՝ **ձայնեղ-խուլ-շնչեղ խուլ** ունեցել է հին հայերենը (հմմտ. *p(b)-ay(p)-ph(p^h)*), ըստ ամենայնի՝ նաև հին (դասական) հունարենը՝ *β(b)-φ(p)-φ(p^h)* (առնվազն նախահունարենում այն կասկածից վեր է): Չորս կարգ՝ **ձայնեղ-շնչեղ ձայնեղ-խուլ-շնչեղ խուլ**, տարբերակել է միայն հին հնդկերենը (հմմտ. *b-bh-p-ph*)¹²⁴: Նույնիսկ հնդիրանական ճյուղի՝ հնդկերենին մերձավոր ցեղակից լեզուները՝ ավեստայի լեզուն և հին պարսկերենը, տարբերակել են հպականների երկու կարգ՝ ձայնեղների (*b, d, g*) և խուլերի (*p, t, k*)¹²⁵: Հետևաբար, եթե ընդհանուրհնդեվրոպական լեզվում հպականների չորս (**d-*d^h-*t-*t^h*) կարգերի տարբերակումը հավանական է տիպաբանական նկատառումներով, որովհետև նրան բնորոշ է համակարգային համաչափությունը, ապա խոցելի է ծագումնաբանական տեսանկյունից, որովհետև հիմնվում է առավելապես մեկ լեզվի՝ հին հնդկերենի տվյալների վրա (հին հայերենում շնչեղ ձայնեղությունը, ըստ ամենայնի, եղել է հնչյունաբանական, բայց ոչ հնչույթաբանական հատկանիշ): Իհարկե, ճիշտ չէ նաև է. Պոռկոշի պնդումն այն մասին, թե հին հնդկերենում շնչեղ ձայնեղների առկայությունը Հնդկաստանի բնիկ ոչ հնդեվրոպական, մասնավորապես՝ դրավիդյան լեզուների ազդեցության հետևանք է, որովհետև այդ լեզուներից փոխառված շատ բառեր շնչեղության հատկանիշը ձեռք են բերել հին հնդկերենում: **Ձայնեղ-խուլ-շնչեղ ձայնեղ** (հմմտ. **d-*t-*d^h*) եռակարգ համակարգը, ըստ Ռ. Յակոբսոնի ձևակերպած ընդհանրությի, խոցելի է համարվում տիպաբանական տեսանկյունից: Իրականում հ.-ե.-ում հպականների **ձայնեղ-խուլ-շնչեղ ձայնեղ** համակարգի վերականգնումն ավելի շուտ խոցելի կարող է դիտվել ծագումնաբանական առումով՝ նկատի ունենալով, որ այդպիսի համակարգ

123 Տե՛ս *Иванов В. В.*, Хеттский язык, էջ 81-90:

124 Հին հնդկերենի դեպքում պահպանում ենք շնչեղ ձայնեղների և շնչեղ խուլերի՝ հնդկագիտության մեջ ընդունված երկտառ գրության ձևը՝ *bh, ph*:

125 Տե՛ս *Расторгуева В. С.*, Древнеиранские языки (авестийский и древнеперсидский), «Языки Азии и Африки», т. II, М., 1978, էջ 21:

չունի և չի ունեցել հ.-ե. ոչ մի լեզու: Տիպաբանական տեսանկյունից այն հազիվ թե կարելի է խոցելի համարել, որովհետև ուսումնասիրողները հպականների այդպիսի համակարգ դիտարկել են այլհամակարգային լեզուներում՝ ավստրոնեզիական կելաբիտում և հյուսիսչինական առանձին բարբառներում:

Հետևաբար, նկատի ունենալով, որ՝ ա) 20-րդ դարի կեսից հնդեվրոպաբանության մեջ գնալով իշխող դարձած տեսակետի համաձայն հ.-ե. նախալեզվի մասին հնարավոր չէ խոսել նույնիսկ իբրև հարաբերականորեն միասնական ամբողջության, ինչպես որ խոսվում է արդի լեզուների կամ թեկուզ գրավոր հուշարձաններով վկայված հին լեզուների մասին, որովհետև նախալեզուն իր գոյության գրեթե բոլոր փուլերում, իսկ ընդհանուր հնդեվրոպականում՝ հատկապես, ունեցել է բարբառային տարբերակածություն, բ) հ.-ե. հին լեզուներով վկայված իրողությունները վերաբերում են ժամանակագրական տարբեր շերտերի, որոնց միջև հեռավորությունը հաշվվում է հարյուրամյակներով և նույնիսկ հազարամյակներով¹²⁶, - ապա ընդհանուրհնդեվրոպականում, որի տրոհումով առաջացել են հ.-ե. առաջին բարբառները (= լեզուները), ամենից հավանականն է վերականգնել հպականների երկու կարգ՝ ձայնեղների և խուլերի, իրենց պարզ և շնչեղ դիրքային տարբերակներով, համապատասխանաբար՝ *b/*b^h, *g/*g^h, *d/*d^h և *p/*p^h, *k/*k^h, *t/*t^h: Սրանց կավելանան քմայինների (հմմտ. *g’/*g^h, *k’/*k^h) և շրթնահետնաքմայինների (հմմտ. *g^u/*g^{uh}, *k^u/*k^{uh}) շարքերը: Հպականների այսպիսի համակարգից, առանց ծագումնաբանական և տիպաբանական հակասությունների, կարող են արտածվել ինչպես երկկարգ (օր.՝ իրանական, գերմանական, կելտական, իտալյան ևն), այնպես էլ եռակարգ (օր.՝ հայկական, հունական) և քառակարգ (հնդկական) համակարգերը: Երկկարգ համակարգի դեպքում, ըստ էության, կվերանա նաև բաղաձայնական տեղաշարժի տարբերակման անհրաժեշտությունը: Ընդ որում, հպականների հ.-ե. համակարգի ուղղակի՝ առանց տեղաշարժի ժառանգորդներ կլինեն ոչ միայն հայերենը, գերմանական, խեթալուվիական և թոխարական լեզուները, ինչպես որ ներկայացվում է «կատկայինների տեսության» Գամկրե-լիձե-Իվանովի տարբերակում¹²⁷, կամ նշվածներից բացի, մյուս լեզուները, ինչպես որ ընդունված էր ըստ ավանդական հնդեվրոպաբանության, այլև բոլոր լեզուները (հմմտ. *B^(h)rātēr «եղբայր» > սնսկ. **bhrā**tā-, հուն. φράτωρ «կրոնական եղբայրության (ֆրատրիայի) անդամ», լատ. **frāter**, գոթ. **brōþar**, հն. վ. գրմ. **bruoder**, լիտ. **broter-ėlis** «եղբայրիկ», հյ. **eīþayr** (եղբայր), հն պալ. **братръ** ևն, - *ped- / *pod- «հետք, ոտք» > սնսկ. pad-, հուն. ποδ-, (սեռ. ποδ-ός), լատ. **pēs** (սեռ. **pedis**), գոթ. **fōtus**, հյ. **hetk^h** (հետ-(ք)) / **otn** (ոտն) ևն): Վերականգնվող նախաձևը կլինի շնչեղության հնչյունաբանական հատկանիշով, թե՛ ոչ, ձայնեղների դեպքում ուղենիշ կարող է լինել հին հնդկերենը, որովհետև շնչեղ ձայնեղների կարգը պահպանվել է միայն այդ լեզվում և նախալեզվում վերականգնվում է հենց հին հնդկերենի տվյալների հիման վրա: Հպականների (ավանդական) քառակարգ համակարգում շնչեղ

126 Shtu **Пизани В.**, Общее и индоевропейское языкознание, «Общее и индоевропейское языкознание», М., 1956, էջ 165:

127 Shtu **Гамкрелидзе Т. В., Иванов Вяч. Вс.**, նշվ. աշխ., էջ 35-49:

խուլեր վերականգնվում են ձևույթի միջին և վերջնային դիրքերում, բայց ոչ սկզբում (հմմտ. հն հուն. δέφω «տորրել, ճզմել», հն հյ. top'em (տոփեմ) «հարվածել»¹²⁸, սերբ. dépati «թակել, ձաղկել» < *dep^h-)¹²⁹: Եվ առհասարակ, շնչեղ խուլ նախաձևերի վերականգնումն ավելի խնդրահարույց է, քան նույնիսկ շնչեղ ձայնեղների վերականգնումը, չնայած այն բանին, որ շնչեղ խուլերի կարգը տարբերակել են ավելի շատ հին լեզուներ (հին հնդկերեն, հին հայերեն և հին հունարեն), քան՝ շնչեղ ձայնեղների կարգը, որը տարբերակել է միայն հին հնդկերենը¹³⁰:

Նախալեզվի հպականների վերոհիշյալ տիպի երկկարգ համակարգից անցումը հ.-ե. բարբառների (= լեզուների) երկկարգ, եռակարգ և քառակարգ համակարգերին, ըստ ամենայնի եղել է տևական գործընթաց, որի ընթացքում չի բացառվում, որ գրավոր շրջանից հայտնի լեզվական համակարգերը կրել են նաև ենթաշերտային ազդեցություններ:

Հ.-ե. նախալեզվում երկկարգ՝ ձայնեղների և խուլերի (շնչեղ և ոչ շնչեղ հնչյունաբանական ենթակարգերով՝ [*D^h]=(*d/*d^h) և [*T^h]=(*t/*t^h) ևն) համակարգի վերականգնումը կարող է խոցելի համարվել իր ընդհանրական բնույթի պատճառով: Սակայն ակնհայտ է, որ մինչև այժմ առաջարկված եռակարգ և քառակարգ համակարգերն էլ խոցելի են ծագումնաբանական կամ/և տիպաբանական նկատառումներով, ուստի չեն կարող նախընտրելի լինել:

Վարդան Զ. Պետրոսյան – հեղինակ է երկու գրքի և քառասունից ավելի գիտական հոդվածների: Զբաղվում է լեզվի տեսության, պատմահամեմատական և կառուցվածքային լեզվաբանության, համաժամանակյա և տարաժամանակյա հնչույթաբանության, հին հայերենի պատմական հնչույթաբանության հարցերով:

Էլ.փոստ՝ vz.petrosyan@ysu.am

Summary

THE INDO-EUROPEAN SYSTEM OF OCCLUSIVES

A new attempt of hypothetical restoration

Vardan Z. Petrosyan

Key words – general Indo-European language, two-sequence system of occlusives, sequence and series, phoneme and sub-phoneme, Ye. Kurilovich, M. Mayrhofer, P. Hopper, F. Kortland, Gamkrelidze-Ivanov concept, “the Glottalic theory”, “the theory of glottalized stops”.

The traditional comparative linguistics has restored two types of systems of occlusives in the Proto-Indo European language – a three-sequence one: voiced-

128 «Թակով լաթը ծեծել» (տե՛ս «Առձեռն բառարան հայկազնեան լեզուի», Անթիլիաս, 1988, էջ 791):

129 Տե՛ս Герценберг Л. Г., նշվ. աշխ., էջ 29-30:

130 Տե՛ս Семереньи О., Введение ..., էջ 65-83, 160-166, Баррой Т., նշվ. աշխ., էջ 70-71:

voiceless – aspirated (comp. *b–*p–*bh) and a four–category one: voiced– voiceless– aspirated voiced – aspirated voiceless (comp. *b–*p–*bh–*ph). The Glottalic theory that developed in the 70s of the 20th century proposed a new pattern of a three–sequence system where the category of simple voiced consonants was replaced by the category of glottalized phonemes (comp. *p')–*p–*bh). In another, a more advanced version suggested by Gamkrelidze–Ivanov the voiced and voiceless consonants were presented in the sub– sequence of aspirated and non–aspirated consonants (comp. *g/*gh,...*k/*kh...): By the way, the sequence of glottalized stops was viewed as lacking – due to the absence of a labial representative. Before the development of this theory, certain representatives of traditional Indo–European studies (H. Hubschmann, H. Pedersen, A. Meillet) viewed the category of simple voiced consonants deficient/ lacking (the absence of *b). The followers of the Glottalic theory (P. Hopper, F. Kortland, A. Odrikor and others) believed that they also shared another feature: the sequence of those phonemes was presented in the voiceless version. We believe that it is not right to attribute a glottalic sequence to the Proto–Indo European language and particularly to the general Indo–European stage from the genealogical point of view since such phonemes were not and are not known in any Indo–European language. This sequence was ascribed to the Indo–European languages through the typological generalization of languages with a different system–structure (semantic, Kartvelian, American–Indian), two of which, according to nostratic linguistics, had kinship relations with the Proto–Indo European language. From both genealogical and typological perspectives, the restoration of the system of voiced and voiceless consonants in general European gets more realistic. Each of them will be presented in the voiced and voiceless subcategory. Such system is not just the pattern offered by Gamkrelidze–Ivanov without the sequence of glottalized stops, but is principally a new approach as the acceptance or rejection of the sequence of glottals means a differentiation of a new pattern of the system of Indo–European phonemes which has its full reflection in the morphological–phonemic structure of the root.

Резюме

ИНДОЕВРОПЕЙСКАЯ СИСТЕМА СМЫЧНЫХ СОГЛАСНЫХ

Попытка гипотетической реконструкции

Вардан З. Петросян

Ключевые слова – общиндоевропейский язык, двухсерийная система смычных, серия и ряд, фонема и субфонема, Е. Курилович, М. Майрхофер, П. Хоппер, концепция Гамкrelидзе–Иванова, «ларингальная теория», «глоттальная теория».

Традиционная сравнительная лингвистика реконструировала в и.–е. языке два типа системы смычных (взрывных) согласных: трехсерийная:

звонкий – глухой – звонкий придыхательный (ср. *b-^{*}p-^{*}bh), и четырехсерийная: звонкий – глухой – звонкий придыхательный – глухой придыхательный (ср. *b-^{*}p-^{*}bh –^{*}ph). Разработанная в 70-ых годах 20-ого века «глоттальная теория» предложила новую модель трехсерийной системы, в которой серия непридыхательных звонких была заменена серией глоттальных фонем (ср. (*p')-^{*}p-^{*}bh), а в более разработанном варианте Гамкрелидзе-Иванова звонкие и глухие смычные были представлены придыхательными и непридыхательными подклассами (ср. *g/*gh, ...*k/*kh ...). Притом, при отсутствии губного представителя серия глоттальных считалась неполноценной. Некоторые представители традиционной индоевропеистики (Г. Гюбшман, Х. Педерсен, А. Мейе) до разработки этой теории считали неполноценной серию непридыхательных звонких (отсутствие *b). Для представителей «глоттальной теории» (П. Хоппер, Ф. Кортланд, А. Одрикур и др.) общим было и то, что серия этих фонем была представлена только глухим вариантом. Нам кажется, что отнесение серии глоттальных звуков к и.-е. языку, в частности, к его общеиндоевропейскому периоду не оправдано генеалогически, т. к. таких фонем не было и нет ни в одном и.-е. языке. Эта серия была приписана к индоевропейскому типологическим обобщением иносистемных языков (семитских, картвельских, америкоиндейских), два из которых, согласно ностратической лингвистике, имели родственные отношения с праиндоевропейским языком. Как с генеалогической, так и с типологической точек зрения в общеиндоевропейском языке более правдоподобным может быть реконструирование двухсерийной системы смычных – звонких и глухих, каждая из которых будет представлена придыхательным и непридыхательным подклассом. Такая система является не просто моделью без серии глоттальных, предложенной Гамкрелидзе-Ивановым, а принципиально новым подходом, поскольку признание или исключение серии глоттальных означает дифференциацию принципиально новой модели и.-е. фонологической системы, которая полностью отражается в морфофонематической структуре корня.

REFERENCES

1. **Agajan E. B.**, O genezise armjanskogo konssonantizma, "Voprosy jazykoznanija", N 4, 1960 (in Russian).
2. **Agh'ayan E. B.**, Nor hayeren barbar'neri arajacman harci masin, PBH, N 1, 1958 (in Armenian).
3. **Agh'ayan E. B.**, Lezvabanakan hetazotut'yunner, Ye'r., YHH, 2003 (in Armenian).
4. **Allen W. S.**, Phonetics and comparative linguistics, Archivum Linguisticum, N 3, 1951
5. **Andreev N. D.**, Periodizacija istorii indoeuropejskogo projazyka, "Voprosy jazykoznanija", 1957, N 2 (in Russian).
6. **Andronov M. S.**, Dravidijskie jazyki // Jazyki Azii i Afriki, t. II, M., 1978 (in Russian).
7. **Ac'aryan H.**, Haykakanq Z. (Yerb Լ dardz'av η), Tegh'ekagir HSSR Gitut'yunneri akademiayi, N 5, 1948 (in Armenian).
8. **Ac'aryan H.**, Hayoc lezvi patmut'yun, II mas, Ye'r., Haypethrat, 1953 (in Armenian).
9. **Barrou T.**, Sanskrit, M., "Progress", 1976.

10. **Benvenist E.**, Problemy armjanskogo konsonantizma, "Voprosy jazykoznanija", N 3, 1961 (in Russian).
11. **Benveniste E.**, La mutation consonantique et les dialects modernes, BSLP, I, 1959.
12. **Blust R. A.**, A double counter-universal in Kelabit, "Working Papers in Linguistics". Department of Linguistics, University of Hawaii, v. 5, N 6, 1973.
13. **Bomxard A. R.**, Očerok sravnitel'noj fonologii tak nazyvaemyx "nostraticheskix" jazykov, "Voprosy jazykoznanija", N 3, 1989 (in Russian).
14. **Desnickaja A.**, Problema dialektal'nogo chlenenija indoevropskoj jazykovej obsh'chnosti i issledovanija V. Porciga, V. Porcig, Chlenenije indoevropskoj jazykovej oblasti, M., "Progress", 1964 (in Russian).
15. **Dzhaukjan G. B.**, K voprosu o proisxozhdenii konsonantizma armjanskix dialektov, "Voprosy jazykoznanija", N 6, 1960 (in Russian).
16. **Dzhaukjan G. B.**, Očerki dopismennogo perioda armjanskogo jazyka, Jer., IAN Arm. SSR, 1967 (in Russian).
17. **Dzhaukjan G. B.**, Sravnitel'naja grammatika armjanskogo jazyka, Jer., IAN Arm. SSR, 1982 (in Russian).
18. **Feydi F.**, Zametki po armjanskomu konsonantizmu, "Voprosy jazykoznanija", N 5, 1961 (in Russian).
19. **Fogt G.**, Zametki po armjanskomu konsonantizmu, "Voprosy jazykoznanija", N 3, 1961 (in Russian).
20. **Gabrielyan Yu.**, Hayerenə yev' naxahndevropakan lezun, Ye'r., 2001 (in Armenian).
21. **Gamkrelidze T. V., Ivanov Vjach. Vs.**, Lingvisticheskaja tipologija i rekonstrukcija sistemy indoevropskix smychnyx ("Konferencija po Sravnitel'no-Istoricheskoj Grammatike Indoevropskix Jazykov" [12-14 dekabrja]). Predvaritel'nye materialy, M., 1972 (in Russian).
22. **Gamkrelidze T. V., Ivanov Vjach. Vs.**, Indoevropskij jazyk i indoevropcejcy, Tbilisi, 1984 (in Russian).
23. **Garibjan A. S.**, Ob armjanskom konsonantizme, "Voprosy jazykoznanija", 1959, N 5 (in Russian).
24. **Garibjan A. S.**, Jesh'jeo raz ob armjanskom konsonantizme, "Voprosy jazykoznanija", N 2, 1962 (in Russian).
25. **Gh'aribyan A. S.**, Hay barbar'agitakan hetazotut'yunneri himnakan ardyunqnerə Sovetakan Hayastanum, PBH, 1958, N 1 (in Armenian).
26. **Gercenberg L. G.**, Kratkoe vvedenie v indoevropcejtiku, Sankt-Peterburg, 2010 (in Russian).
27. **Georgiev V. I.**, Issledovanija po sravnitel'no-istoricheskomu jazykoznaniju, M., IIL, 1958 (in Russian).
28. **Gh'aribyan A. S.**, Hay barbar'neri c'agman harci sh'urj, PBH, 1958, N 3 (in Armenian).
29. **Gorshkov A. I.**, Staroslavjanskij jazyk, M., 1974 (in Russian).
30. **Guxman M. M.**, Gotskij jazyk, M., ILIYA, 1958 (in Russian).
31. **Grinberg J.**, Nekotorye obobsh'chenija, kasajush'chiesja vozmozhnyx nachal'nyx i konechnyx posledovatel'nostej soglasnyx, "Voprosy jazykoznanija", N 4, 1964 (in Russian).
32. **Ivanov V. V.**, Novaja literatura o dialektnom chlenenii obsh'eindoevropskoj jazyka, "Voprosy jazykoznanija", N 1, 1956 (in Russian).
33. **Haudricourt A. G.**, Les mutations consonantiques (occlusives) en indo-européen, "Collection linguistiques de la Société de Linguistiques de Paris", N 70, Paris, 1975.
34. **Hopper P.**, Glottalized and murmured occlusive in Indo-European, "Glossa", 7,2, 1973.

35. **Hyubsh'man H.**, Hayereni dirqo hndevropakan lezneri sh'rjanaknerum, Hayagitakan usumnasirut'yunner, Ye'r., 2004 (**in Armenian**).
36. **Ivanov Vjach. Vs.**, Problema laringal'nyx v svete dannyx drevnix indoevropskix jazykov Maloj Azii, VMGU, N 2, 1957 (**in Russian**).
37. **Ivanov Vjach. Vs.**, Khetskij jazyk, M., IVL, 1963 (**in Russian**).
38. **Ivanov Vjach. Vs.**, Obsh'eindoevropskaja, praslavjanskaja i anatolijskaja jazykovye sistemy, M., 1965 (**in Russian**).
39. **Jahukyan G. B.**, Hay barbar'agitut'unə yev' hayereni barbar'neri c''agman harcə, PBH, N 2, 1959 (**in Armenian**).
40. **Jakobson R.**, Tipologicheskie issledovanija i ix vklad v sravnitel'no-istoricheskoe jazykoznanie, "Novoe v lingvistike", vyp. III, M., 1963 (**in Russian**).
41. **Kasevich V. B.**, Fonologicheskie problemy obsh'ego i vostochnogo jazykoznanija, M., 1983 (**in Russian**).
42. **Korolev A. A.**, Xetto-luvijskie jazyki, Yazyki Azii i Afriki, t. I, M., "Nauka", 1976 (**in Russian**).
43. **Kortland F.**, Praindoevropskie glottalizovannye smychnye, "Voprosy jazykoznanija", N 4, 1985 (**in Russian**).
44. **Kortlandt F.**, Proto-Indo-European, IF, 83, 1978.
45. **Krasuxin K. G.**, Vvedenie v indoevropskoe jazykoznanije, M., "Akademija", 2004 (**in Russian**).
46. **Kurilovich E.**, O metodax vnutrennoj rekonstrukcii, "Novoe v lingvistike", vyp. IV, M., "Progress", 1965 (**in Russian**).
47. **Macaev E. A.**, Obsh'aja teorija sravnitel'nogo jazykoznanija, M., 1977 (**in Russian**).
48. **Majrxofer M.**, Indoevropskaja grammatika. t. 2. Fonetika, "Novoe v zarubezhnoj lingvistike", vyp. XXI, "Progress", 1988 (**in Russian**).
49. **Martine A.**, Princip ekonomii v foneticheskix izmenenijax, M., IIL, 1960 (**in Russian**).
50. **Martinet A.**, Remarques sur le consonantisme sémitique, BSL, 49, 1953.
51. **Martinov V. V.**, Slavjanskaja i indoevropskaja akkomodacija, Minsk, "Nauka i texnika", 1968 (**in Russian**).
52. **Meje A.**, Vvedenie v sravnitel'noe izuchenie indoevropskix jazykov, M.-L., GSEI, 1938 (**in Russian**).
53. **Meje A.**, Obsh'eslavjanskij jazyk, M., IIL, 1951 (**in Russian**).
54. **Meillet A.**, Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, Vienne, Imprimerie des PP. Mekhitharistes, 1936.
55. **Meillet A.**, Les dialectes indo-europeens, Paris, Librairie de Société de Linguistique de Paris, 1950.
56. **Odri Zh.**, Indoevropskij jazyk, "Novoe v zarubezhnoj lingvistike", vyp. XXI, "Progress", 1988 (**in Russian**).
57. **Odri Zh.**, Tipologiya I rekonstrukciya, "Novoe v zarubezhnoj lingvistike", vyp. XXI, "Progress", 1988 (**in Russian**).
58. **Pedersən H.**, Hayeren yev' draci leznerə, Vienna, Mxit'aryan tparan, 1907 (**in Armenian**).
59. **Petrosyan V. Z.**, Hin hayereni լ(լ) yev' ղ(ղ) dz'aynordneri c''agumə yev' hnc'h'abanakan ar'zh'eqaynut'yuny, VEM, N 3, 2017 (**in Armenian**).
60. **Pizani V.**, Obsh'ee i indoevropskoe jazykoznanie, M., 1956 (**in Russian**).
61. **Polivanov E. D.**, Subektivnyj xarakter vosprijatija zvukov jazyka, (**in Russian**).
62. **Polivanov E. D.**, Stat'i po obsh'emu jazykoznaniju, M., 1968 (**in Russian**).
63. **Porcig V.**, Chlenenie indoevropskoj jazykovoj oblasti, M., "Progress", 1964 (**in Russian**).

64. **Prokosh E.**, Sravnitel'naja grammatika germanskix jazykov, M., IIL, 1954 (**in Russian**).
65. **Rastargueva V. S.**, Drevneiranske jazyki (avestijskij i drevnepersidskij) , Jazyki Azii i Afriki, t. II, M., "Nauka", 1978 (**in Russian**).
66. **Savchenko A. N.**, Sravnitel'naja grammatika indoevropskix jazykov, M., "Vysshaja shkola", 1974 (**in Russian**).
67. **Saussure F. de**, Contribution à l'histoire des aspirées sourdes [sanskrit], Recueil des publications scientifiques, Genève, 1922.
68. **Semerem'i O.**, Vvedenie v sravnitel'noe jazykoznanie, M., "Progress", 1980 (**in Russian**).
69. **Sepir E.**, Glottalizovannye proxodnye v navakho, nutka i kvakiutle (s zamechaniem ob indoevropskom), **Sepir Edvard**, Izbrannye Trudy po jazykoznanii i kul'turologii, M., "Progress", 2002 (**in Russian**).
70. **Sepir E.**, Jazyk. Vvedenie v izuchenie rechi, **Sepir Edvard**, Izbrannye Trudy po jazykoznanii i kul'turologii, M., "Progress", 2002 (**in Russian**).
71. **Sevak G.**, Hay barbar'neri c'agman harci shurj, PBH, N 1 (4), 1959 (**in Armenian**).
72. **Shirokov O. S.**, Bartolome zakon, Lingvisticheskij enciklopedicheskij slovar', M., 1990 (**in Russian**).
73. **Shirokov O. S.**, Grasmana zakon, Lingvisticheskij enciklopedicheskij slovar', M., 1990 (**in Russian**).
74. **Shirokov O. S.**, Kavkazsko-indoevropskie fonologicheskie sxozhdenija ("Konferencija po Sravnitel'no-Istoricheskoj Grammatike Indoevropskix jazykov" [12-14 dekabrja]). Predvaritel'nye materialy, M., 1972 (**in Russian**).
75. **Sossyur F. de**, Memuar o pervonachalnoj sisteme glasnyx v indoevropskix jazykax, **Sossyur Ferdinand de**, Trudy po jazykoznaniju, M., "Progress", 1977 (**in Russian**).
76. **Sturtevant E. H.**, A comparative grammar of the Hitite language, Philadelphia, Thy Linguistic Society of Amerika, 1933
77. **Tronskij I. M.**, Obsh'eindoevropskoe sostojanie (voprosy rekonstrukcii), L., "Nauka", 1967 (**in Russian**).
78. **Vogt H.**, Les occlusives de l'arménien, NTS, XVIII, 1958.
79. **Xamburgaev G. A.**, Staroslavjanskij jazyk, M., 1974 (**in Russian**).
80. **Xokkett Ch. F.**, Problema jazykovyx universalij, "Novoe v zarubezhnoj lingvistike", vyp. V, M., "Progress", 1970 (**in Russian**).
81. **Xopper P. Dzh.**, Tipologija praindoevropskogo nabora segmentov, "Novoe v zarubezhnoj lingvistike", vyp. XXI, "Progress", 1988 (**in Russian**).
82. **Xopper P. Dzh.**, Jazyki "decem" i "taihun": indoevropskaja izoglossa, "Novoe v zarubezhnoj lingvistike", vyp. XXI, "Progress", 1988 (**in Russian**).
83. **Zabrockij L.**, Zamechanija o razvitii armjanskogo konsonantizma, "Voprosy jazykoznanija", N 5, 1961 (**in Russian**).
84. **Zhuravlev V. K.**, Diaxronicheskaja fonologija, M., 1986 (**in Russian**).